

ՀԱՆՉ ՀՈՂՔԱՆԿՈՒՄԱՏ - ԱԳՐՈ-ՏԵԽ-ԹՐՈԼՊԱԿԱՏՈՐ

Օ. ԽՈԶՈԽԲԵԱՆ

ԲԱՆՉԱՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ  
ԱԳՐՈԶԵԽՆԱՐԿՈՒՄՆԵՐ


ՅԵՐԵՎԱՆ 1933

8 DEC/2017

ՀԱՅՀ ՀՈՂՔՈՎՐՄԱՏ - ԱԳՐՈ-ՏԵԽ-ԹՐՈՓՄԵԿԸՆՈՐ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԱՆՁԱՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ  
ԱԳՐՈԶԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐ



8 DECEMBER 1933

ՀՈՎԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԵՎ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Բանջարանոցային կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում խոշոր տեղ է ըստում հողի կանոնավոր և ժամանակին մշակելը՝ հերկը, կրկնահերկը, փոցխելը և պարարտացնելը։ Բանջարանոցային բույսերի խոշորագույն մասը չափ բերքատու յեւ, մեկ միավոր տարածությունից նրանք վերցնում են մեծ քանակով սննդանյութեր, այդ պատճառով բերքի բարձրացման խնդրում կարենոր տեղ պետք ե տալ այն բանին, թե վորչափով հողի մեջ լեղած սննդանյութերը մատչելի յեն ըույսին և վորքան տարածություն կողտագործի բույսն իր զարգացման ընթացքում։

Բանջարանոցի հողը պետք ե հերկել աշնանից։ Աշնանավարն այն առավելությունն ունի, վոր նա նպաստում ե խոնավության կուտակմանը։ Աշնան վարած հողի մեջ ծծվում ու կլանվում են աշնան ու գարնան տնձըկների, ինչպես նաև ձյան ջրերը, և լերկար ծամանակ պահպում են այնտեղ, իսկ բանջարեղենների մշակության գործում ջուրը կարենորագույն ֆակտորներից եւ Աշնանահերկը նպաստում ե որդանատկան նյութերի (կենդանական և բուսական մնացորդների) քայլայմանը, վորով հողը հարստանում ե սննդանյութերով, և մլուս կողմից նպաստում ե մնացորդների ու բուլսերի հիվանդություններ առաջնորդ սունկերի, ծմբան ձկերի, հարսնյակների և սոլորների վոչնչացման։ Աշնան հերկը նպաստում ե հողի կառուցվածքի լավացմանը, վորով հողը հարստանում կոշտերը ցրտի և քամուազգեցության տակ փշրվում են և փրխրանում։ Վերջապես, աշնան հերկը թեթևացնում է գարնան աշխատանքները և հնարավորություն ե տալիս այդպիսիք կատարել ժամանակին։ Գարնան հերկը կատարվում է այն գեպքում, յերբ այն չի հաջողվել անել աշնանը։

Այսպիսով, ուրեմն, բանջարանոցի հողը պետք ե հերկել անպայման աշնանից։ Գարունը բացվելիս աշնան հերկը անմիջապես պետք ե փոցխել, խոնավության ոլանդանման նպաստելու

Պատմատի տպաքան  
Գլավիտ 9184 (ր)

Գատվեր 651  
Տիպան 2000

11-2695498



Մրագրեցին

Ս. ՀԱԿՈԲՅԱՆ,  
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

համար, իսկ ցանքից կամ սածիլումից միջանի որ առաջ, նստած հողը փխրեցւելու և մոլախոտերը վոչնչացնելու նպատակով կատարում են հողի մակերեսալին մշակություն։ Հողի մակերեսային մշակությունը կատարում են այնպիսի մեքենաներով, վորոնք հողը չեն շրջում, այն եւ զապանակավոր փոցիով, բազմախոփանի կուլտիվատորներով, յերեսավարներով և այլն։ Յեթև աշնանը լավ ե հերկված, ապա կրկնահերկ անելու կարիք չկա։

Գութանով կրկնահերկ անում են նաև որգանական պարագացումը դարնանը մտցնելու դեպքում։

Ինչ վերաբերում ե պարարտացմանը, պետք ե ասել, վոր բանջարանոցները պարաբացվում են գոմաղբով, թարմ և փտած վիճակում, խառնաղբով (տան, բակերի և փողոցների աղբով)։ մարդկարին կղկղանքով, մոխիրով, հանքային պարատանցութերով և, վերջապես, կանաչ պարարտացմամբ։ Գումարյով պարարտացնելու դեպքում, թարմ կամ կիսափտած գոմաղբը պետք ե մտցնել աշնանից, իսկ փտած գոմաղբը, կոմպոստը, մոխիրը և այլն մտցնում են գարնանը։ Վերջին դեպքում պարարտանյութը դաշտ տանելուց հետո անմիջապես պետք ե ցրվել և հողի սականել։ Հանգային պարարտանյութերը մտցնում են գարնանը ցանքից կամ սածիլումից 7—10 որ առաջ, իսկ վորոշ դեպքերում նաև ցանքի հետ միտամանակ։

Բանջարանոցային բուլսերի մեծ մասը մշակում են սածիլներով։ Սերմը նախապես ցանում են հատուկ սածիլանոցներում, և յերբ բույսը դառնում ե 4—6 տերեանի, փոխաղբում են և տնկում իր մշտական տեղը՝ դաշտում։

Այժմ ծանոթանութեանցանցային առանձին բուլսերի և նրանց մշակության հետ։

#### ԿԱՂԱՄԲ—ՎԱՂԱՀԱՍ, ՄԻԶԱՀԱՍ ՅԵՎ ՈՒՇԱՀԱՍ

Հատ հասունության կաղամբը բաժանում ենք 3 խմբի։

1. Վաղահաս—վորը գլուխ ե կապում ցանելուց 90—100-րդ

2. Միջին հասունության      »      » 110—130-րդ որում

3. Ուշահաս                          »      » 130—և ավել որ

Պարզ ե, վոր ամեն մի տնտեսություն ցանելու համար պետք է ընտրի կաղամբի այն փոփոխակը—սորտը, վորը համապատասխանում ե նաև տվյալ տեղի կլիմայական պայմաններին և տընտեսության պլանային առաջադրանքին։

Այս տեսակետից ուշադրության արժանի լին կաղամբի հետեւակա սորտերը, վորոնք կարելի յե ձեռք բերել Սայուզամենավորի մեր տեղական բաժանմունքներում։

Վաղահաս սորտերից—«Համար առաջին» «դժուարկա» և «կոպենհագենի»։ Դրանցից համար առաջինը, ամենավաղահաս փոփոխակն ե, գլուխը կապում և սածիլը դաշտ դուրս բերելուց 50—65-րդ որում։

Տալիս ե լավ կաղմակերպված, բավականին խիտ գլուխներ՝ 1—1,5 կիլոգրամ միջին քաշով։ Ծածկող տերևները (գլխի տերևները) սպիտակ են, քիչ կանաչավուն, հասունանալուց հետո արժատի վրա յերկար չի դիմանում և պատավում ե, այնպես, վոր համար համար հետո անմիջապես պետք ե քաղել։ Գլուխը կլոր ե, կարճ կոթունով և միջակ խտության և ավագույն փոփոխակն ե վաղ մշակության համար։

Կանոնավոր մշակության դեպքում և նպաստավոր պայմաններում հեկտարից տալիս ե 15—20 տոնն բերք։

Դիմարգան։ Սա շատ նման,

և համար առաջինին, սակայն նրանից միջանի որ ավելի ուշ և հասունում և տալիս ե ավելի խոշոր զըլլումներ։ Գլուխը կլոր ե, խիտ և ավելի սպիտակ ծածկող տերևներով, քան համար առաջինը։ Մնացած հատկությունները նույնն են, վորպես վաղահաս սորտ։ Տատ գնահատելի և արդյունավետ ե Մեր պայմաններում միանգամայն լավ արդյունք և տալիս։

Նկ. 1. «Համար առաջին» վաղահաս կաղամբ։

Կոպենհագենի—Նույնպես վաղահաս փոփոխակ ե, միքանի որով ավելի ուշ և հատուում, քան առաջին յերկու սորտերը։

Դրանք կլոր ե, ցածր կոթունով, ավելի զիմացկուն և և ուշ և ճաքում, տալիս ե ավելի խոշոր զըլլուներ 1,5—2,0 կիլոգրամ քաշով։ Ծանր հողերում հասունանալը ձգձգվում ե։

Փորձերը ցույց են տվել, վոր կոպենհագենը մեր պայմաններում միանգամայն գնահատելի սորտ ե։

Միջին հասունության ունեցող սորտերից—Վալվատեսկայա, Սայուզաբրառունշվեյդյան, բերլուսիան, բոլորն ել մեր պայմաններում ստուգված են և տալիս են լավ արդյունք։

Վալվատեսկայայան—Սա միջին վաղահաս լիժյուն ունեցող



ոռոսական հին սորտ ե, վորը, գլուխ և կապում սածիլը տնկելուց  
70—80 որում, այսինքն՝ վաղահաս տեսակներից 20—25 որ ուշ:

Գլուխը սպիտակ ե, բավական մեծ, ցածր կոթունով, բայց  
վոչ շատ խիտ, հասունանալուց կարող և բավական դիմանալ  
առանց ճաքելու, արդյունավետ սորտ ե, զէնի միջին քաշը 2,5—3  
կիլոդրամ ե:



Նկ. 2. Կաղամբ դիմատկա վաղահաս.

Սլավան—Միջահաս լավագույն սորտերից ե, մեր բոլոր շըլ-  
ջաններում ել շատ լավ և մշակվում ու բարձր բերք և տալիս:

Գլուխը կլոր ե, բավականին խոշոր, սպիտակ, համեղ և զի-  
մացկուն: Հասունում ե սածիլելուց 80—90 որում, մեր նախալեռնա-  
յին և լեռնային շրջաններում տալիս և բարձր վորակի չափա-  
գանց լավ բերք, զլիսի միջին քաշը 2,5—3,5 կիլոդրամ ե: Արժա-  
նի լե ամենալավն ուշադրության և տարածման:

Բրառնեվիյզյան—Սա ավելի շուտ միջին ուշահասություն-  
ունեցող սորտ ե, շատ հին և լավագույն սորտերից ե. մեզ մոտ  
ել ամենից շատ տարածված սորտ ե: Ունի սորտին տիպիկ տա-  
փակ, խոշոր, կարճ կոթով գլուխ: Շոգի և ցբուի նկատմամբ չա-  
փագանց դիմացկուն ե: Հասունանալուց հետո յերկար ժամանակ  
մուտք և արժատի վրա առանց ճաքելու:

Հասունութեան սածիլը տնկելուց 90—100 որում: Աշնան լավ սորտ  
ե, իսկ լեռնային գոտում՝ կարող և զնալ նաև իրքի ձմռան  
սորտ: Գլուխի միջին քաշը 3—4,5 կիլո յե:

Բելոռուսիան—Այս սորտը նոր ե և մեր խորհրդային սե-  
լեցիոն կայանների աշխատանքի արդյունք:

Տալիս ե կլոր, միջին մեծության, չափազանց սպիտակ՝  
խիտ գլուխներ, վորոնք թի զրառում և թի ձմռանը պահելու հա-  
մար դիմացկուն են: Թթու դնելու և մարդուադի համար անփոխա-  
րինելի սորտ ե: Գլուխի միջին քաշը 3—4 կիլո:



Նկ. 3. Կաղամբ դիմատկա վաղահաս.

Ուշահաս սորտերից ուշադրության արժանի յեն ուռւսական  
հետեւալ սորտերը—Ամազեր, Կաշիրկա, Մոսկվայի ուժահաս և մեր  
տեղական փոփոխակները, Լենինականի աեղական, Կոտայքի—  
Բաշգլուղի, Ցեղովանի, Գեշոլուի: Խորական ուշահաս տեսակ-  
ներից մեզ մոտ շատ չեն արված, այնպես վոր դժվար ե նրանց

Ժամին վծոռկան բան ասել, ըսկ կաղամբի մշակության մեր հիմնական շրջաններում յեղած տեղական փոփոխակնը շատ լավ բրդյունք են՝ առևիս ի անհրաժեշտ և նրանց վրա հարկ յեղած



Նկ. 4. Կաղամբ «օլավա».

Աւշակը բությունը դարձնելու Միաժամանակ պիտք և ոռոսական սորտերն ել՝ փորձել և առաջնաբար մտցնել մշակության մեջ այս տեղերում, վորտեղ նրանք լավ կդնան:



Նկ. 5. Կաղամբ «բրառնչվեցյան».

Ամագեր—Դանիական ուշահաս փոփոխակ ե, լավագույնը՝ ձմռան պահելու համար, շատ դիմացկուն ե, հասունանում ե սա.

Ճիլը տնկելուց 120—130 որում, Գլուխը չափազանց խիտ ե, միջին մեծության, տիպիկ կապտա-կանաչավուն արտաքին տեքուներով, գլխի միջին քաշը 2,5—3,5 կիլոգրամ ե, արժանի յէ ուշադրության:



Նկ. 6. Կաղամբ ածագեր.

Կաթրիկա—Ռուսական փոփոխակ ե, ստացված Մոսկվայի սկզբան կայանում, Համնում և սածիլելուց 110—120 որում, տակած կալիպտր, կլոր, սպիտակ, խիտ գլուխ: Բերքատվության տեսակետից առաջնակարգ տեղերից մեկն ե բռնում: Դիմի միջին քաշը 4—4,5 կիլոգրամ ե:

Թթու պատրաստելու և աղ դնելու համար լավագույն փոփոխակ եւ:

Մասկվայի ուշահասը - Նույնպես ստացված և Մոսկվայի Սելեկցիոն կալանում, տիպիկ ուշահաս սորտ եւ, շատ խոշոր, սպիտակ կլոր և լավ կազմակերպված դիմով. արտաքին տերեները, շատ խոշոր են մուգ կապտականաչափուն գույնի: Հիվանդությունների նկատմամբ դիմացկուն եւ կ լավագույն սորտերից մեկն եւ ձմռանը պահելու և փոխադրությունների համար: Հասունանում և սածիլը տնկելուց 120—130 որում: Լավ բերք տալու համար պահանջումն եւ շատ պարագ և խոնավ հողեր: Դիլսի միջին քաշը՝ 4,5—6 կիլո:

Տեղական հեշտահաս սորտերից բացի, այս սորտերից ընտրություն կատարելիս ամեն անգամ պետք եւ նկատի ունենալ պահանջման մի սորտի հատկությունը:

Կաղամբի սածիներ սանալը.—Վաղահաս կաղամբի սածիները պատրաստում են ջերմոցներում կամ տաք մարգերում այն հաշվով, վորպեսզի վաղ գարնանը, ինը հողը տաքանա, տնկելու համար պատրաստի սածիլներ լինի:

Այդ նպատակով ցանքը կատարում են սածիլը դաշտ գուրս բերելու որից մեկ ու կեսից 2 ամիս առաջ, այնպես, վոր սածիլը ջերմոցում մնա 2 ամսից վոչ ավելի: Ցանքի ժամկետ վորոշում են լինելով տեղի կլիմայական պայմաններից:

Ալսպիսով, ուրեմն միայն վաղահաս կաղամբի սածիլն եւ պատրաստվում ջերմոցներում, իսկ միջին հասունության և ուշահաս կաղամբների սածիլները պատրաստվում են բացությա սածիլանոցներում կամ լեռնային ցուրտ գոտիներում, տաք մարգերում:

Կաղամբը սիրում եւ թափանցիկ, սննդանյութով հարուստ, բերբի հողեր: Ծանր հողերում կաղամբ կարելի լի մշակել միայն գոմաղբով լավ պարարտացներուց հետո: Կաղամբի դաշտը պարարտացնում են գոմաղբով, հեկտարին տալով 40—80 տոննի չափով: Աղքատ հողերում գոմաղբին կարելի լի ավելացնել հանքալին

պարարտանյութերը, իսկ սննդանյութերով հարուստ լավ հողերում գոմաղբը ճնարավոր եւ լիովին փոխարինել հանքալին պարարտանյութերով: Այսպես թե ալնպես, պետք եւ լավ հիշել վոր առանց պարարտացման կաղամբ մշակել չի կարելի:

Հանքալին պարարտանյութերից կաղամբին պետք եւ տալ ցիանամիդ (կիրազոտ), ամմոնիամ-սուլֆատ և սելիտրա՝ վորպես ազոտական պարարտանյութ, վորպես ֆոսֆորական պարարտանյութ՝ սուպերֆոսֆատը, իսկ վորպես կալիոնական պարարտանյութ կալիումի 30—40% աղ կամ սիլվինիտ:

Փորձերը ցուց են ատլիս, վոր մեր հողերում կաղամբի պարարտացման համար մեկ հակառակին պետք եւ վերցնել հանքալին պարարտանյութերի հետևյալ քանակը:

1. Ցիանամիդ (կիրազոտ) . . . . . 300—350 կիլոդրամ

2. Սուպերֆոսֆատ . . . . . 300—350 \*

3. Կալիումի 40% աղ . . . . . 250—350 \*

Կալիոնական պարարտանյութ մեր շատ հողերին կարելի լիչ չտալ վորովինեակ մեր հողերը կալիումինով հարուստ են:

Ցերբ հանքային պարարտացումը արգում եւ որգանական պարարտանյութերի հետ միասին, պետք եւ վերցնել թե մեկը և թե մյուսը՝ նորմայի կեսի չափով:

Կաղամբի համար, վորպես որգանական պարարտանյութ գործ են ածում բացի գոմաղբից, խառնաղբը, փողոցների և տների զիբիլը գործարանային զանազան թափթփուկների, մարդու կղկղանք և ալն: Մրանց նորման եւ հեկտարին 40—50 տոնն:

Հանքալին պարարտանյութերը, արգում են գարնանը սածիլուց 7—10 որ առաջ և փոցինով խառնում հողի հետ:

Որգանական պարարտանյութեր գոմաղբը, կոմպոստը և ալյն վաղահաս կաղամբի համար պետք եւ տալ անպայման աշնանից, աշնան հերկի ժամանակ, վորպեսզի վաղ գարնայը կաղամբի սածիլը տնկելիս այն հողում լինի կիսաքայլքայված վիճակում, և պատրաստի սննդանյութեր մատակարարի վաղ սածիլների:

Միջին և ուշահաս կաղամբների համար ել ցանկալի լի, վոր որգանական պարարտանյութերը տրվեն աշնանից, Սակայն, յեթե տնտեսության հնարավորությունները թույլ չեն տալիս ալդ անելու, կարելի լի պարարտացումը կատարել վաղ գարնանը:

Հողի մշակությունը՝ կաղամբի համար հերկ պետք եւ անել աշնանը՝ 18—20 սանտիմետր խորությամբ:

Աշնանավարը, ինչպես վերն ասացինք, ունի հետեւյալ դրական կողմերը. նա նպաստում է խոնավության կուտակմանը,



ստեղծում և հողմնահարման համար նպաստավոր պայմաններ և զալքարի միջոց հանդիսանում հրվանդությունների ու դժասատուների դիմ:

Աշխան հերկած հողը վաղ գարնանը պետք և փոցինել վորքան կարելի յեւ շուտ և կարճ ժամանակամիջոցում, վորպեսպի հողերը չչորանան: Յեթե աշխանավարը կանոնավոր և արքած, կարիք չկա գութաներով կամ առնաւարակ շրջող մեքենաներով գարնանը կրկնահերկ անել, հարկավոր և միայն հողը մակերեսորեն մշակել փխրեցնող մեքենաներով, զսպանակավոր փոցիներով, կուլտիվատորով, բազմախոփանի թեթև լերեսավարներով, ափսեավոր փոցիներով և այլն:

Յեթե սիջահաս և ուշահաս կաղամբների համար հողը աշխանից հերկված ե, բայց պարարտացված չե, պետք և վաղ գարնանը որգանական պարարտանյութը ցըելուց հետո հողը հերկել 12—15 սանտիմետր խորությամբ, իսկ ցանքից առաջ փոցինել միայն:

Յեթե վորենե պատճառներով աշխան հերկ չի կատարված, արդ դեպքում գարնանավարը պետք և կատարել վորքան կարելի յեւ վաղ և անմիջապես փոցինել վոր հողը չչորանա:

Կաղամբը սածիլում են եարթ, յերկար մարգերում, և վոչ թե թումբերի վրա: Սածիլում են կամ մեքենայով, կամ մեքենայի բացակայութիւն դեպքում, ձեռքով: Սածիլները պետք ե տնկել հետեւալ հեռավորությունների վրա.

1. Վաղահաս կաղամբը—շարքը-շարքից 50—60 սանտիմ հետ.

բույսը-բույսից 35—40      »      »

2. Միջահաս կաղամբը—շարքը շարքից 60—70      »      »

բույսը-բույսից 50—60      »      »

3. Ուշահաս կաղամբը—շարքը-շարքից 70—80      »      »

բույսը-բույսից 60—70      »      »

Այս հաշվով մեկ հեկտարին կաղանանցի սածիլ՝

Վաղահաս կաղամբ . . . . . 30—40.000 հատ

Միջին հասունության . . . . . 20—24.000 »


Ուշահաս . . . . . 18—20.000 »

Կաղամբը պիտի սածիլել «քեշը» յեկած հողում, չոր հողերում սածիլ տնկել չի կարելի: Վաղահաս կաղամբների համար այս բանը հեշտ և լուծվում, վարովհետև վաղ գարնանը խոնավություն չառ և լինում և հողը միշտ ել «քեշ» գիճակում և լինում: Յեթե հողը չոր ե, անհրաժեշտ և 2—5 որ առաջ ջրել և ապա յերբ քեշը կզա, տնկել: Սածիլ տնկելու աշխատանքը կատարվում է

բրիգադայով, ամեն մի բրիգադում պետք ելինեն փոս փորողներ, սածիլ բերողներ, սածիլ գցողներ, սածիլ տնկողներ և ջրողներ: Ենք հեկտար սածիլ տնկելու համար անհրաժեշտ և 14—16 քանդոր:

Լավ սածիլը պետք ելինի կարև, հաստ ու մուգ-կանաչագույն և ունենալ լավ զարգացած, փնջած արմատներ, վորոնց վրայի հողը չպետք ե թափված լինի:

Սածիլը պետք ե տնկել վաղ առավոտյան՝ մինչեւ ժամը 10—11-ը և յերեկուան ժամը 4-ից հետո, իսկ ամպամած որերին՝ կաքելի լեւ տնկել ամբողջ որվա ընթացքում: Սածիլը պետք ե



Նկ. 8. «Բրույերի» սկստեմի սածիլ անող մեքենա:

տնկել խորը, ամուր սեղմել նրա կողքի հողը, սակայն պետք ե նայել, վոր աճման կողը, կամ ինչպես ասում են՝ սածիլի «սիրտը» հողով ծածկված լինի:

Տնկելուց հետո անմիջապես պետք ե ջրել: Այսուհետեւ, չոր պայմաններում, կարիք և զգացվում տնկած սածիլը 2—3 որից հետո նորից ջրել, իսկ խոնավ պայմաններում այդ կարեքը չի զգացվում: Յեթե տնկած սածիլների  $10^{\circ}$  միջակայքում ավելին չի կպչում, անում են լրացուցիչ սածիլում՝ առաջին 10 որվա ընթացքում:

Սածիլը կպչելուց հետո, հետաքա լինամքը հողի փիրեցումն է, Առաջին անգամ փիրացնում են, սովորաբար, սածիլը կպչելուց 10—15 որ հետո: Այսուհետեւ լստ կարիքի, նալած հողի

կազմությանը, յեթե հողը կավային եւ և ուժեղ կերպով կեղես։  
կալում ե, փխրեցումը կատարում են ավելի հաճախ։

Պետք ե փխրեցնել ջրելուց հետո, լեռը հողը «քեշի» յե գա-  
լիս Դրանով մենք նպաստում ենք խոնավության պահպանմանը  
և ողի՝ հողի մեջ թափանցելուն։ Ծանը հողերում փխրեցումը կա-  
ղամբի մշակության դործում վճռական դեր ե խաղում, վորովհե-  
տեւ վոչ փուխր և թափանցիկ հողում կաղամբը աճել չի կարող։  
Փխրեցումից բացի, նաև քաղանում են, ալսինքն՝ մոլախոտերը  
վոչչացնում, շատ հաճախ փխրեցման և քաղանի աշխատանք-  
ները կատարվում են միաժամանակ, բայց լինում են գեպքեր,  
լեռը մոլախոտեր չեն լինում, բայց փխրեցնելը կատարել անհրա-  
ժեշտ ե լինում։ Թե քաղանը և թե փխրեցումը կատարում են  
կուլտիվատորներով և հատուկ փխրեցնող մեքենաներով, իսկ  
կուլտիվատորների և մեքենաների բացակայության դեպքում կա-  
րելի յե քաղանել փխրեցնել ձեռքի հողուրադներով։

Ինարկե, պետք ե անպայման աշխատել այս գործողություն-  
ները մեքենայացնել, վորովհետև դրա համար մենք արդեն ու-  
նենք բազմաթիվ կատարելազործված մեքենաներ, վորոնք և ա-  
րագացնում են աշխատանքը և քիչ բանուժ են պահանջում։

Առաջին փխրեցումից 10—15 որ անց կատարում են կա-  
ղամբի առաջին բուղլիցը, Բուղլիցը պետք ե կատարել նույնպիս-  
հատուկ բուղլից մեքենաներով։

Վաղահաս կաղամբի բուղլ լցնում են 1 անգամ, իսկ միջին  
և ուշահաս կաղամբինը՝ 2—3 անգամ։

Մրանով վերջանում ե կաղամբի մշակության տեխնիկան։  
Եատ տեղերում կաղամբի մշակության ժամանակ կարում են  
նրա ներքեւ տերևները՝ գլուխ կապելուց առաջ, կարծելով, վոր  
դա կնպաստի գլուխ կապելուն, բայց դա ճիշտ չե։ Կաղամբի ներ-  
քեւ տերևները կարիք չկա կտրելու, դա կարելի յե անել միայն  
այն գեպքում, լեռը կաղամբի գլուխը հասել ե և պետք ե այն  
քաղել, սակայն տնտեսության պայմանները ստիպում են փոքր  
ինչ սպասել ե, վորպեսզի, հասած կաղամբի գլուխը չպատովի,  
կտրում են նրա ներքեւ տերևները։ Այսպիսով կանգնեցնում են  
կաղմբի հետագա աճեցողությունը և ճաքելու առաջն առնում։

Վաղբահաս կաղամբը—քաղում են 2—3 նվագ, նկատի ունե-  
նալով նրա վոչ միաժամանակ հասունանալը, Բերքահավաքն ըս-  
կավում և հունիսի լեռկորդ կեսերից և վերջանում ոգոստոսի առա-  
ջին կեսերին։

Ուշահաս և միջահաս կաղամբները հավաքվում են միան-  
գումից։

Բերքահավաքից առաջ պետք ե նախապատրաստել անհրա-  
ժեշտ փոխադրական միջոցները և տարած այն հաշվով, վոր քա-  
ղամբ կաղամբը նույն որը տնտեսությունից փոխադրվի։ Հակա-  
ռակ դեպքում քաղամբ կաղամբի կուտերը պետք ե ծածկել տե-  
րևներով, գոլորշիցման և չորացման առաջն առնելու նպատա-  
կով։

Կաղամբը քաղում են մեծ դանակներով կամ ցակատներով,  
զլուխը կտրում են հենց կոթունի տակից այնպես, վոր գլխի հետ  
կտրվեն աշխատավոր տերևները։ Գլխի մաքրումը աշխատավոր  
տերևներից պետք ե կատարել վորոշ տեղերում, —քաղամբ կա-  
ղամբը հավաքում են միքանի տեղերում և այդ տեղ ել մաքրում  
աշխատավոր տերևներից, վորպեսզի կտրած տերևներն ամբողջ  
դաշտում ցրված չլինան և հեշտ լինի նրանց փոխադրումը դեպի  
սիլոսի հորերը, կամ անսուլններին կերակրելու վայրերը, կամ  
լիթե սիլոսացման տեղը, մոտ ե՝ ավելի լավ ե ամբողջ կաղամբը,  
առանց մաքրելու, փոխադրել այնտեղ և ապա մաքրել վորովհե-  
տեւ փոխադրելը միաժամանակ պաշտպանում է կաղամբի գլուխները  
ջարդվելուց և կեղոտավելուց։

Ուշահաս կաղամբը քաղելուց հետո նույնպես պետք ե նույն  
որը դաշտից փոխադրել հակառակ դեպքում պետք ե տերևներով  
լավ ծածկել, վորպեսզի չցրտահարվի և դիմանա մինչեւ մաքրելը։

Բերքահավաքից և տերևները սիլոսելու համար հավաքելուց  
հետո, պետք ե դաշտից հավաքել ու հեռացնել բոլոր հիվանդ տե-  
րևների և աբմատների մնացորդները, այրել և անմիջապես աշնան  
հերկ անել։ Իսկ վաղահաս կաղամբից ազատված դաշտը պետք ե  
ոգտագործել աշնան կանաչեղեններ, կանաչ սոխ, կարաշկի, սպա-  
նաղ և այլ կարճ վեգետացիա ունեցող բուտերի ցանքի համար։


Կաղամբի հիվանդությունների և մնացորդների դեմ ժամանա-  
կին պայքար մղել ՈԲՀ-ի մանազետների դեկավարությամբ ու  
տված ցուցմունքներով։

### ՏՈՄԱՏԻ (ՊԱՄԻԴՈՐԻ) ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տոմատը մեր գաշտավայրի բանջարանոցների ու զահածո-  
ներ պատրաստելու դոնայի հիմնական կուլտուրան եւ կավ աճե-  
ցալության, լրիվ պաղաքերության ու բարձր բերքատվության  
համար նա պահանջում է բարձր ջերմաստիճան, վեգետացիայի

յերկար շրջան և արեալատ որեր: Զեայած դրան, տոմատի մշակութիւնն անհրաժեշտ և տարածել մեր արդյունաբերական և ինդուստրիալ կենտրոնների ու մեծ քաղաքների բոլոր զոնաներում, վորովնետկ պամիղորը, իբրև վիտամիններով հարուստ և սննդառատ բանջար, մեծ տեղ պետք ե գրավի բանվորական մատակարարման գործում: Իհարկե, նախալեռնային և մանավանդ լեռնալին գոտում տոմատը այնպիսի հաջողությամբ չի կարելի մշակել, ինչպես դաշտավայրում, բայց և այնպես նրա մշակութիւնը պետք ե առնել մինչև այդ գոտիները:

Նկատի ունենալով, վոր տոմատի մշակութիւնը գլխավորապես կենտրոնացած և դաշտալին գոտում, կանգ տոնենք նրա մշակութիւն տեխնիկայի վրա՝ դաշտավայրի պայմաններում: Պամիղորն ունի բազմաթիվ փոփոխակներ (սորտեր), վորոնք տարբեր հատկություններ ունենալով կարող են ծառալել այս



Նկ. 9. Տոմատ Երլիանի

կամ այն նպատակին: Բայց հասունության պամիղորը նույնպես բաժանվում է 3 խմբի՝ վաղահաս, միջահաս և ուշահաս: Մեր պայմաններում մշակվող փոփոխակներից անհրաժեշտ և նշել առածված հետեւյալ փոփոխակները:

1. Երլիանի վաղահաս կամ սպարғն Երլիանի. —Վաղահաս փոփոխակ ե, բերքատվութիւնը բարձր, բավական խոշոր, կլոր կամ

կլոր-տափակավուն, վառ կարմիր գույնի, մսալի և համեղ պտուղներով: Առաջին պտուղը հասնում է ցանքից 100—110 որում: Այս փոփոխակի բացասական կողմն այն ե, վոր պտուղները հասնելուց հետո պտղակոթունի մոտից շատ շուատ ճաքճքում է և հեղառնաթամբ հիվանդանում սնկալին հիվանդություններով: Մեզ մոտ այս փոփոխակը շատ տարածված է:

2. Վաղահաների բազավոր.—Այս փոփոխակը նույնպես վաղահաս ե, հասնում է Երլիանի հետ միասին, ունի քիչ շերտավոր խոշոր վառ կարմիր գույնի մսալի պտուղներ: Դիմացկուն և հիվանդություններին: Մեզ մոտ նույնպես տարածված է:


3. Յուվել. —Շատ լավ բերքատվ, բարձր գորակի, գեղեցիկ պտուղներով փոփոխակ ե, պատկանում ե ուշահասների խըմին: Ունի փարթամ, լավ զարգացած թթւի: Պտուղը մսալի յե-



Նկ. 10. Տոմատ «Յուվել».

շատ համեղ և չի ճաքճքում: Պահածո արդյունաբերության համար լավագույն փոփոխակներից մեկն ե շնորհիվ իր խոշոր, մսալի պտուղների և բարձր բերքատվության: Մեզ մոտ շատ լավ յեւ աճում: Յուվելը մեր բանջարաբանական հիմական շրջաններում առաջնակարգ տեղերից մեջը պետք է գրավի:

**Եռկայի հրաշալիք.**—Սա իել մեզ մոտ տարածված փոփոխակ է, պատկանում է ուշահասնեցի խմբին: Լավ, փարթած աճող սորտ է, տալիս և խոշոր, կլոր, գեղեցիկ, համեղ մսալի պտուղներ, բերքատվությունը շատ բարձր է, մեզ մոտ մեծ չափով մշակվում է Նոր-Կողբ գյուղում, և տալիս է չափազանց լավ արդյունք: Արժանի յե միծ ուշադրության և տարածման տոմատացած Մշաններում:



Նկ. 11. Ցումատ—«Եռկայի հրաշալիք».

**5. Զան-բեր.**—Համեմատաբար նոր սորտ է, և շնորհիվ լր լավ հատկությունների ուշադրության արժանի: Մեզ մոտ փորձված է և շատ լավ արդյունք է տալիս: Ուսի խոշոր, կլոր, կամ կոր-տափակավուն, կողքերից քիչ սեղմված վառ-կարմիր գույնի բավականի մսալի և համեղ պտուղներ: Արդյունաբերական լավ սորտ է:

Այս բոլոր փոփոխակներն ել կլիմայական համապատասխան պարմաններում և կանոնավոր մշակության դեպքում ապահովում են բարձր բերքատվություն:

Այս փոփոխակների սերմերը՝ կարելի լի ստանալ Սայուզի մենավողից:

Ցումատը կարելի լի մշակել տարբեր հողերում, սակայն բարձր բերք ստացվում է թափանցիկ, լավ տաքացող, մննդանյութերով հարուստ և մոլախոտերից աղատ հողերում: Կավագաղալին

հարուստ հողերում ել տոմատը լավ բերք է տալիս: Ավագա-կավալին և ամազային հողերում տոմատը թեև տալիս է քիչ բերք, սակայն ջուտ է հասցնում: Ցանքաշրջանառության մեջ տոմատը դասավորում են թարմ պարարտացումից հետո, յերկրորդ տարում: Տոմատ չի կարելի մշակել կարտոֆիլից հետո, վորովհետեւ յերկու կուլտուրաներն ել ունեն սնկային միենանուն հիվանդությունները: Շատ հարուստ սեահողերում, ինչպես և թարմ պարարտացումից անմիջապես հետո տոմատը հուանում է, փարթամանում և քիչ պտուղ տալիս: Աննդանյութերով տղթատ հողերում տոմատը պարարտացնում են փատած գոմաղբով կամ կոմպոստով՝ հեկտարին տարով 30—40 տոննի չափով, կամ հանքային պարարտանյութերով՝ հետեւալ քանակով մեկ հեկտարին:

1. Ցիանամիդ (կիրազոտ) . . . . . 200—300 կիլոգրամ.

2. Սուպերֆունֆատ . . . . . 350—450 կիլոգրամ.

Տոմատի հողը պետք է վարել աշնանից 18—20 ապահով, խորությամբ, իսկ գարնանը փիրեցնել զսպանակավոր կամ զիգզագ փոցիներով, բազմախոփանի լերեսավարներով, կուլտիվատորներով և այլ փիրեցնող մեքենաներով: Վատ մշակված, կողտու հողերում լիթեա աշնանավարը լավ չի արված, ապա դարնան կըրկնահերկն անհրաժեշտ է: Գումաղբով պարարտացնելու դեղքում ցանկալի յե գոմաղբ տալ աշնանից, յեթե ալդ չի հաջողվում ժամանակին կատարել այդ գեղքում վաղ դարնանը փոցխում են աշնանահերկը, փատած գոմաղբը կամ կոմպոստը վրան ցրում երկնաներկ անում և պարարտանյութը 10—12 սանտ. խորությամբ հողի տակը տալիս:

Հանքային պարարտանյութերը տալիս են զարնանը, սածիւմից 7—10 որ առօդ:

Տոմատի սածիւներ պատրաստվում են թե ջերմոցներում, թե բաց սածիւնոցներում: Ջերմոցներում սածիւներ պատրաստում են տոմատի վաղ բերք ստանալու համար, իսկ ուշահասները կարելի լի ցանել բաց սածիւնոցներում: Սակայն պետք է անել, վոր նախալեռնալին և լիոնալին գոտիներում տոմատի բոլոր սածիւները պետք է աշխատել ստանալ ջերմոցներում, վորովհետեւ բացովիւ սածիւնոցներից ստացած բուլսերը ուշ են պտղաբերում և շատ քիչ բերք են տալիս: Դաշտավայրում ել անհրաժեշտ է, վորքան հնարավոր է, շատ սածիւներ ստանալ ջերմոցներում և տաք մարգերում: զրանով մենք յերկարացնում ենք բերքատվության ըրջանը և բարձրացնում բերքի քանակը:

Սածիւլ ջերմոցում պետք է մեծացնել ալսպես, վոր դաշտ

դուրս բերելիս նա ունինա 4—6 լավ զարգացած կարթամ տերևներ, լինի կարճ, հաստ և մուգ կապտականաշագույն, սովորած դրսի պայմաններին, Սածիլը վոչ մի գեղքում ծաղկած ջղետք և լինի: Դաշտ դուրս բերելուց առաջ սածիլը պետք և լավ ջրելք վրապեսզի այն դուրս դա հողով և արմատները մերկացած չլինեն. սածիլի արմատների վրայի հողը չպետք և թափ տալ: Սածիլ զաշտ պետք և դուրս բերել գարնան ցրտահարության վախը իսպառ անցնելուց հետո, վորովհետեւ տոմատը ողահանջում և բարձր ջերմառիման և 12 աստ.-ից ցած ջերմաստիճանում նրա աճեցողությունը կանգ և առնում Յեթի դաշտ դուրս բերած սածիլը յիրկար ժամանակ՝ 10—15 որ մեա այդպիսի ցածը ջերմաստիճանից տակ, հետագայում այդ հանգամանքը կանգրադառնա նրա ամրող զարգացման և պտղաբերության վրա:

Տոմատ մշակում են տարբեր ձևերով, թումբերի վրա, գետնատարած, պառկեցրած և փայտերի ու լարերի վրա բարձրացրած: Կիմայական և հողային պայմաններին նայած պետք և ընդունել մշակության այն ձեր, վորը հնարավորություն կտա մաքսիմալ չափերով մեքենաացման լինթարկել մշակության բոլոր պրոցեսները: Մեր դաշտավայրում, ջրովի պայմաններում, բացառապես ընդունված և թումբերի վրա պառկեցրած սիստեմը, վոր մի շաբթ խոշոր առավելություններ ունի: Սակայն պետք են տոել, վոր մեզ մոտ մինչեւ ալֆմ գոյություն ունեցող մի կողմից տնկվող կարճ թումբերի սիստեմը պետք և ձևափոխել և արմարեցնել մեքենատացման աշխատանքներին: Մեզ մոտ պամիգուրի դաշտը բաժանում են մի շաբթ տախտակների՝ 6—8 մետր լուսությամբ և հետո ձերկը մյուսից 1,5—2 մետր հեռավարության վրա թումբեր կազմում, վորի միայն մի կողմն են տնկում տումատը, պարզ ե, վոր ալիսպիսի պայմաններում աշխատանքի մեքենաացում հնարավոր չե: Թումբերի վրա գետնատարած պառկեցրած սիստեմն ունի այն առավելությունները, վոր ջրելու ժամանակ տամատը, թումբի վրա գտնվելով, չի թրջվում, չի խռնամանում, չի նեխում և զերծ և մնում սնկային հիվանդություններից, միաժամանակ գետնի վրա գտնվելով, նա տվելի առ պայմաններում և լինում, քան փայտի վրա բարձրացրած, առնելու շուտ և ծաղկում և ավելի շուտ և կարմրում:


Գիտահետազոտական աշխատանքները ցույց են տվել վոր տոմատի մշակությունը գաշտավայրի և նախակեռնային ցոտու-

ջրովի ուսայմաններում պետք և տանել յերկար, 200—300 մետր յերկարություն ունեցող թումբերի վրա և սածիլը տնկել թումբի յերկու կողմերում: Դրա համար թումբերը քաշում են այնպես, վոր թումբի լայնությունը լինի 1,2—1,4 մետր, իսկ առաների լայնությունը սկզբում լինի 1 մետր 20 սանտ., վորպիսի առւների մեջ հողի պաշար մնա հետագայում վար դնելու համար: Վերջում, յերբ վար դնելու համար առվի տման կողմից 30 սանտիմ հող կվերցվի առվի լայնությունը կմնա 60 սանտիմետր:



Նկ. 12 ա.

Այս ձեր մշակության դեպքում թումբեր կապելու աշխատանքը կարելի յե մեքենացման լինթարկել հետևյալ ձևով: Մրակությունը հետևից կազում են մեծ յերկու լայն թեր ունեցող քուզից մեքենա, վորը մի ռւզզությամբ գնալով հողը շուր և



ՎԱՐԸ ԴՆԵԼՈՒԹ ՀԵԾՈ

Նկ. 12. բ.

տուլիս յերկու կողմը և բացում 1,2 մետր լայն տուռ, յետ գալիս նա հողը շուր և տալիս մյուս կողմը և այդպիսով, առաջացնում թումբեր ու առուներ: Այդ հույն աշխատանքը տրակտորի բացակայության դեպքում կարելի յե կատարել ձիռ գութանով կամ բուզլիցով: Այս դեպքում, ինարկե, աշխատանքն ավելի դանդաղ և ընթանում, բայց ավելի արագ, քան ձեռքի մարկոսով:

Այս ձեր մշակությունն ունի այն առավելությունը, վոր հետագա բոլոր աշխատանքները կարելի յե մեքենալացման լինթարկեր: Այսպիս սածիլը կարելի յե տնկել սածիլ անկող «Բրա-

ուերի տիպի յերկշարքանի մեքենայով, վորի անիմսերը կգնուն յերկու հարևան թռմբերի մեջտեղով, իսկ անկող մասերը՝ ուղիղ առվի յեզերքով, և միանգամբ կտնկեն սածիլներ առվի յերկու կողմում։ Վերադառնալիս մեքենան սածիլներ կտնկի մլուս յերկու կողմում։ Վար դնելը նույնութեան կկատարվի բուզից մեքենայով, վօրը կդնա ջրառույի միջով և հողը շուռ կտա առվի յերկու կողմը և այսպիսով կկատարի բուզիցը կամ վար դնելը։ Պամիգորի մշակման այս ձևունինաւ այն առավելությունը, վոր ամբողջ թռմբը ջուր ստանալով կողից՝ չի կեղեակալում, քիչ ջուր և գոլորշեացնում և մոլախոտերով չի ծածկվում։ Հետագայում յերկու կողմից տնկած բույսերը փարթամ զարդանալով, լցնում են ամբողջ թռմբի տարածությունը և ծածկում ամբողջ դաշտը բացի առուներից։

Այս ձեմի մշակության դեպքում կարիք չկա բոլորովին բճառում կատարել վորովինուն մեր կլիմայական պայմաններում տառմատի վեզետացիալի համար ունենք 5—6 ամիս և առանց բճառակելու նա կարողանում է լրիվ պտղաբերել։ Ինչ վերաբերում է նախալեռնային գոտուն, այնտեղ անհրաժեշտ է թեթև բճառում կատարել և թողնել 4—5 ցողուն, իսկ լեռնային գոտում՝ անպարհան պետք և ուժեղ բճառում կատարել և վերամշակել փայտեցի վրա՝ 1—2 ցողունով։ Լեռնային գոտիներում մշակությունը տառնում են փայտերի վրա, վորովինուն այնտեղ անձրևներ շատ են գալիս, հողը միշտ խոնավ և լինում է յեթե բույսը պառկած լինի հողի վրա, նա ամբողջովին կնեխի։ Լեռնային գոտիներում մշակությունը պետք է տանել 1—2 ցողունով, վորովինուն կլիմայի ցրտության և վեղետացիոն շրջանի կարծության հետևանքով, տռամատն առանց բճառման իր պտուղները չի հասցնում, քիչ պտուղ և տալիս։

Փայտերի վրա մշակությունն ունի ընդհանրապես այն բացասական կողմերը, վոր շատ թանգ և նստում, վորովինուն ցիցեր խփելը, բույսերը կապելը, բճառելը և այլն կատարվում է ձեռքով և մեծ քանակությամբ բանուժ պահանջում։ Աւրեմն՝ մեզ մոտ տռամատի մշակության հիմնական ձեր պետք և ընդունել յերկար թռմբերի յերկու կողմում տնկելու ձեւը։ Թռմբի լայնությունը, ինչպես ասացինք, պետք է վերցնել 1,2—1,4 մետր իսկ բույսը բույսից պետք է տնկել 40—50 սանտիմետրի վրա։ Այս խորությամբ տնկելիս մեկ հեկտարին գնում է մոտ 20,000 սածիլ։ Փայտերի վրա մշակելիս տռամատը տնկում են շաբթը-շարքից

օ սանտ. և բույսը բույսից 50—60 սանտիմ. հեռավորության վրա, այս դեպքում մեկ հեկտարին գնում է 28,000 սածիլ։

Թռմբալին սիսակմում մեկ կողմից միայն տնկելիս մեկ հեկտարին գնում է 12—14,000 սածիլ (ձեռնտու չե, վորովինեաբերքը ցածր ցածր և լինում): Ինչ ձեմի մշակություն ել ընդունենք հետ ագալում պահանջվելու լին հետևյալ աշխատանքները—

Սածիլը պետք է տնկել վաղ առավոտյան կամ յերեկոյան։ Սածիլը տնկել «քեշը» յեկած հողում ավելի խորը, քան նա յեղել և սածիլանցում։ Վորքան խոր տնկենք, այնքան լավ, վորովինեաբետ տռամատի ցողունը հողով ծածկելիս առաջացնում է յերկրորդական պրմատներ և ուժեղացնում բույսի ոնդապությունը։ Սածիլը տնկելուց ան միջառեն հետո պետք է ջրել, սակայն ջուրը չպետք է շատ բարձրացնել և կցողուններին հացնենել Պորալին պայմաններում, 3—4 որ հետո սածիլը նորից պետք է ջրել և այնուհետեւ 15—18 որ, նալած յեղանակներին, չպետք ջրել, վրապեսզի սածիլն ամրացնի և խորացնի իր արմատակին սիստեմը։ Այնուհետեւ պետք է տալ յերկրորդ ջուրը և քեշը զալուց հետո բուզից անել, կամ ինչպես ընդունված է ասել՝ «վարը զնել»։ Վար դնելուց առաջ դաշտը պիտի քաշանել բույսերի ցողունների մոտ ել կեղեակալած, կամ ինչպես ասում են՝ «բողազը» սնկմած չսլիտի լինի։

Վարը դնելը մեծ արդյունք է տալիս այն դեպքում, յերբ կատարվում է ժամանակին և հողի «քեշը» վիճակում։ Քեշը թռած և անժամանակ զրած վարն իր նալատակին չի հասնում։ Վարը պետք է դնել տռամատը ծաղկելուց առաջ։ Փայտերի վրա մշակելու դեպքում բուզից և փիփեցում է կտարարվում։

Հետագա խնամքն է քաղհանը, փիփեցումը և ջրելը։ Քաղհանը պետք է անել ժամանակին և չթողնել, վոր մոլախոտերը խեղեն տռամատին։ Աւշացրած քաղհանը կորցնում է իր նշանակությունը, նայած հողին և կլիմայական պայմաններին, մշակության ամրողջ ընթացքում անում են 2—3 քաղհան և 2 փիփեցում։

Տռամատը պիտի բճառել ժամանակին, հենց առաջին փիփեցման ժամանակ։ Պետք է հետեւ, վոր բիճերը չաճեն և չխլեն բույսի սնունդը։ Պիտի բճառել բիճերի մատղաշ հաստիում, վորոպեսզի նըանք կտրվեն ձեռքով և վոչ թե գանակով։

Տռամատը հեշտությամբ է վարակվում տնկելին հիվանդություններով։ Դրա առաջն առնելու համար հուրիս ամսից սկսած

անկախ նրանից՝ տոմատը հիվանդ է, թե վոչ, 0,5% բորբոքան հղուկով պարբերաբար պիտի կատարել նախազգուշական որըս կուժեր:

Պամիզորը սկսում է կարմրել սածիլը դաշտ դուրս բերելուց 2—3 ու կես ամսից հետո: Բերքահավաքից առաջ պետք է միջոցներ ձեռք առնել բերքահավաքը արցայով և փոխադրական միջոցներով ապահովելու համար: Տոմատի համար ամենալավ տարան վոչ շատ մեծ արկղներն են, զորոնց տարողությունը 16—26 կիլորամբ ավելի չպիտի լինի:

Արկղները պատրաստումեն լավ փայտից, կողքերից արանքներ թողենելով: Տոմատը արկղների մեջ դարսում են 3—5 շաբթից վոչ ավելի: Շատ մեծ արկղների մեջ տոմատը ջարդված է և փշանում:

Հավաքելու համար ամենալավ տարան դուլիքն են կամ փոքր կողովները: Բերքը հավաքելիս անպալման պետք է տեսակավորել, վրավեսդի առողջ պատուղների հետ ջարդված և հիվանդ պտուղներ չիննեն, պետք է ջոկել նաև խոշոր պտուղները մանրերից և առա դարսել արկղների մեջ: Բերքահավաքի ժամանակ հիվանդ և նեխոծ պտուղները վոչ թե պետք է զցել առուների կամ թմբերի մեջ, այլ պետք է հավաքել մի ամանի մեջ, դաշտից դուրս տանել և այրել: Շատ հաճախ անցիտակցաբար նեխած և փտած պտուղները ցցում են առուների մեջ, մռանալով, վոր սընկային հիվանդության վարակը հետագալում, ջրելու ժամանակ ոյլ նեխած պտուղից կտարածվի ամբողջ դաշտում և կվարակի առողջ բույսերը: Այսպիսս, սնկացին հիվանդությունների տորածման պատճառը շնորհիվ մեր անփութության հաճախ մենք ենք լինում: Պետք է խիստ հետեւ, վոր վոչ մի հիվանդ և նեխած պտուղ չմնա դաշտում, բոլորը պետք են հավաքել, դուրս տանել և այրել:

Հավաքած տոմատը չպետք է թողնել արեկի տակ, դրանից նա կթառամի և փոխադրելու համար կանգետքանա: Հավաքած բերքը անմիջապես պետք է փոխադրել ծածկի տակ, տեսակավորել և զարսել արկղների մեջ: Փօխադրական միջոցների պակասության դեպքում հավաքած բերքը պետք է պահել ստվեր տեղում: Տոմատը պետք է հավաքել նորմալ հասունացած վիճակում և չթողնել, մորթիկի վրա ճխլվի: Պտուղը պետք է լինի կարմիր և ամուր: Հեռու մանագորի ուղարկելու համար պետք է քաղցել կիսահաս վիճակում, ճանապարհին նա կհասնի:

Բերքահավաքը պետք է վերջացնել ցրտահարությունից ա-

ռաջ: Կանաչ մնացած տոմատները կարելի չեն ուղաղովել թթու զնելու համար կամ պահել տաք նկուղներում, վորտեղ նա աստիճանաբար կկարմրի: Բերքահավաքից հետո տոմատի բոլոր մնացորդները կ այն հավաքել և դաշտից դուրս բերել տեղին ել անմիջապես աշնան հերկ անլ:

### ԲԱԴՐՁԱՆԻ ՅԵԼ ՏԱՅՏԵՂԻ ՄՃԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս յերկու կուլտուրաներն ել զիխավորապես տարածված են մեր դաշտավին գոտում, վորովհետև ողանանջում են բարձր ջնրմություն, չոր ոդ, արևատառ ոքեր և լերկար վեգետացիոն շրջան: Յերկու կուլտուրայի մշակության տեխնիկան նույնն է, պրահամար տալիս ենք միասին: Այս կուլտուրաները մեզ մոտ՝ Հայաստանում ունեն անտեսական խորոք նշանակություն թե վերպես սնունդ և թե վորպես արդյունաբերության հումույթ:

Տոմատի հետ միասին սրանք կազմում են պահածո արդյունաբերության բանջարեղենների վերամշկության հիմքը:



Նկ. 13. Բազմացան բոլցարական

Այսպիսով, այս յերեք կուլտուրաները՝ տոմատը, բաղրջանը և տաքտեղը հանդիսանում են պահածոյի զործարանին հատկացած զնալիք զիխավոր և հիմնական կուլտուրաները:

Փոքություն ունեն տաքտեղի և բաղրջանի զանազան փո-

փոխակներ, վորոնք սիմյանցից զանազանվում են ըստ հասու-  
նության և ըստ բերքի քանակի ու վորակի: Բաղրջանի վոփո-  
խակներից մեզ մոտ տարածված են մեր տեղական լեռկաց տեսակ-  
ները և բազուռական կրչված տանձանելի տեսակները:

Տաքտեղի փոփոխակներից տարածված են «բոլդարական»  
քաղցրա փոփոխակը, վորը գնում և զիխավորապես կոնսերվի ար-  
դյունաբերության համար և տեղական կծու ու քաղցր տեսակ-  
ները:

Բարձր բերք ստանալու համար տաքտեղի և բաղրջանի սա-  
ծիլները պետք եւ պատրաստել ջերմոցներում կամ տաք մարգիր-  
սածիլանոցներում: Սածիլ կարելի է պատրաստել նաև բացոթյա-  
սածիլանոցներում, բայց այս դեպքում բերքատվությունը յիր-  
կար չի լինում: Սածիլիու, ցանքի,  
խնամքի և դաշտ դուրս բերելու ժամ-  
կետները նույնն են, ինչ վոր տոմա-  
տի համար՝ թե ջերմոցներում և թե  
բաց սածիլանոցներում:

Բաղրջանն ու տաքտեղը սիրում են  
թափանցիկ, պարարտ, լավ տաքացվող  
կավատվազային հեղեղ, շատ թեթևակա-  
ճողիրում նրանք հոռանում են և քիչ  
բերք տալիս: Մեր դաշտավայրի հո-  
ղերը տաքտեղի և բաղրջանի մշակու-  
թյան համար հարմար են, միայն  
պետք եւ լավ պարարտացնել: Տաքտե-  
ղին և բաղրջանին իբրև պարաբա-  
նյութ պետք եւ տալ փտած գոմազը  
կամ խառնաղը, զիբիլ հեկտարին 30—40  
տոննի չտփով, կամ հանքային պա-  
րարտանյութեր տամատի համար նշված  
նորմաներով:

Պարարտանյութ տալու ժամկետները  
եւ ձեզ նույնն են, ինչ վոր տոմատի  
համար:

Նկ. 14. Բոլդարական բա-  
ղրջան  
Հողը պետք է հերկելաշնանից 18—20  
սունտիմ, խորությամբ, իսկ վաղ պար-  
նանը փոցինել: Սածիլումից առաջնողը մշակել իբրևսավարներով:

զսպանակավոր փոցինով, կուլտիվատորներով՝ կամ բազմախոփա-  
նի գութաններով՝ առանց թնի:

Աշնանից լավ չմշակված հողերը կրկնահերկ անել:



Նկ. 15. Տաքտեղ բոլդարական բաղրջան

Տաքտեղը և բաղրջանը մշակում են եարթ, յերկար մար-  
գերում, շարքը շարքից 60—70 սանտիմ. և բույսը բույսից  
40—50 սանտիմ. հեռավորության վրա: Այսպիսով, մեկ հեկտա-  
րի համար կալահանջվի 24.000 սածիլ: Պետք եւ սածիլել «քեզը»  
եկած հողում՝ առավատան մինչև ժամը 10—11 և յերեկոյան  
ընօպին՝ ժամը 4-ից հետո: Սածիլը պետք է տնկել արմատավորից  
2 սանտիմետր խորը: Տաքտեղի և բաղրջանի սածիլը դրանից  
խորը չեն տնկեւմ և հետագալում ել՝ բույզը չեն լցնում, վորովհե-

առև նբանց դոզումը շուտ և փայտանում և հաղով ծածկվելիս ցու-  
ղութից արմատներ չե առաջնում:

Խոկ գնջաձն արմատներ ստանալու համար ջերմոցում սա-  
ծիլը անպայման պետք և պիկրովկայի լինթարկել:



Նկ. 16. Տաքտեղ կծու ռկարգի-  
նալի.

Տաքտեղի և բաղրջանի մշա-  
կության հիմնական պայմաններն  
են՝ փխրեցումը և քաղնանը:  
Փխրեցումը կարեռագույն աշ-  
խատանքներից մեջն ե, վորի  
հաճախակի և ժամանակին կատա-  
րելը ապահովում և տաքտեղի և բաղրջանի բարձր բերքը: Փխրե-  
ցումը և քաղնանը ավելի հաճախ պետք և կատարել աճեցողու-  
թյան սկզբնական շրջանում, յերբ թե տաքտեղը և թե բաղրջանը  
շատ զանգաղեն աճում և քաղնանը ուշացնելու դեպքում հեշտու-  
թյամբ ծածկվում են մոլախոտերով: Մշակության ամբողջ շրջա-  
նում պետք և կատարել 2—3 քաղնան և նույնքան փխրեցում:  
Սովորաբար հուլիս ամսից հետո արդեն առքտեղի և բաղրջանի  
աճեցողությունը շատ աբար և գնում և բուկսերը բարձրանալով  
ծածկում են տմբողջ դաշտը



Նկ. 17. Տաքտեղ բուկսարկան  
յերկար.

Այդպիսով վերանում և քաղնանի կարիքը:

Բաղրջանի և տաքտեղի բերքահավաքը կատարվում և պար-  
բերաբար, ըստ պառւզների հասունության:

Բերքահավաքը պետք և կատարել վաղ առավոտյան կամ  
յերեկոյան, և հավաքածը անմիջապես փոխադրել դաշտից:

Եռգ ժամանակ հավաքած բաղրջանը և տաքտեղը հեշտու-  
թյամբ թառամում են և կորցնում են իրենց վորակը:

### ԱՐՄԱՏԱՊՏՈՒԴՆԵՐ

Սեղանի գազար.—Մշակ-

վում և համարչա մեր բուլոր  
շրջաններում, սակայն բար-  
ձը վորակի գազար ստա-  
նալու համար կլիմայական  
ամենալավ պայմանները ներ-  
կայացնում են նախտլեռնա-  
լին և լիռնալին գոտիները:  
Այդ շրջաններում գազարի  
մշակությունն ունի տնտե-  
սական խոշոր նշանակու-  
թյուն և բռնում և ցանքերի  
բավական պատկառելի տա-  
րածությունը: Մեր պայ-  
մաններում սեղանի գազա-  
րի փափոխակներից ուշա-  
գրության արժանի և լավ  
արդյունք են տակիս հետե-  
յաները, նաև սուկի վաղա-  
հաս—կիսալերկար փոփո-  
խուկ ե:

Արմատապտուզը նարնջա-  
կարմրագույն ե, հարթ, զլա-  
նաձև, բութ ծալրով, հոմա-  
րչա թե առանց միջուկի:  
Զափազանց համեղ և քաղցր

փոփոխակ ե: Արմատիկի  
բիջին յերկարությունը 12—15 սմ., խոկ զլիքի վերին մասի արա-  
մագիծը՝ մոտ 4 սանտիմ: Ունի մանր տերեներ՝ արմատի զլիքի



Նկ. 18. Գազար նաևսուկի.

մտաց հողից դուրս եւ Հասունանում եւ ցանքից 100—120 որ հետո; Իբրև սեղանի զազար շատ համեղ եւ և լավ, բայց ձմեռը դժվար եւ պահպառ:

Նանինեն.—Նույնպես վաղահաս և կիսաչերկար փոփոխակե, Նարնջա-կարմրագույն, արմատիկն կոնածե, բութ ծալբով:

Արմատապտուղը ամբողջովին նստած եւ հողի մեջ, յերբն 0,5—1 սանտիմ հողից դուրս եւ լինում: Հողից դուրս գտնվող մտաց կապտա-մանիչակագույն եւ լինում, ունի լայն միջուկ, արմատիկի յերկարությունը 10—15 սանտիմ եւ Հասունանում եւ 115—120 որում: Գնահատելի, համեղ փոփոխակ եւ, ձմռանը պահելու համար դիմացկուն: Մեր պայմաններում փորձված եւ և տակիս եւ լավ արդիունք:

Դիրանդա.—Պատկանում եւ վաղահասների խմբին, արևատիկը կոնածե եւ, կիսաչերկար, բթածալը, նարնջա-կարմրագույն:

Արմատիկի յերկարությունը 9—20 սանտիմետր եւ, ամբողջութին նստած հողում, միայն գլխի մտաց 1—1,5 սանտիմետր յերկարությամբ հողից դուրս եւ գտնվում: Ունի լայն անկլունավոր



Կ. 19. Գաղար շանտենե.

ձեր միջուկի համեղ փոփոխակ եւ, ձմռան համար դիմացկուն: Հասունանում եւ 115—120 որում:

Վալերիա.—Սա ուշահաս փոփոխակ եւ, շատ բերքատու, յերկար կոնածե արմատիկով: Գույնը նարնջա-կարմրագուն, արմատիկը քաղցր, հարթ մտկերեսով, յերկարությունը 20—30 սան-

տիմետր: Գլխի տրամագիծը 4—7 սանտիմ: Դլուխը ը հողից դուրս չի գալիս և ունի նույնպես նարնջա-կարմիք դույն: Միջուկը գեղին եւ ունի կլոր ձև: Հասունանում եւ ցանքից հետո 130—140 որում: Ունի արդյունաբերական խոշոր նշանակություն, ձմռան պահելու համար չափազանց դիմացկուն եւ Շատ լավ փոփոխակ եւ լեռնային և նախալեռնային, գոտիներում մշակելու համար:

Վարպետի:—Մուսական հին փոփոխակ եւ, շատ բերքատու, խոշոր, յերկար, կոնածե, նարնջա-դեղնագույն արմատիկով, լայն դեղին միջուկով, մեալի և քաղցր: Նույնպես արդյունաբերական նշանակություն ունեցող փոփոխակ եւ, ձմռան պահելու համար լավ դիմացկուն: Արժանի յեռագրության լեռնային և նախալեռնային գոտիներում:

Բացի այս ստանդարտ փափոխակներից, մեզ մետ հայտնի յին նաև «Էլենինականի» և «Արամուսի» (Կոտալը) տեղական փոփոխակը ները: Սակայն 1932 թ. ապրոբացին աշխատանքները ցույց տվին, վոր «Էլենինականի տեղական» սորտը հանդիսանում է Վալերիայի և Վորոբյովի սորտերի խանուրդ, վորի մաշտակությունը՝ 0,8 վալերյան եւ:

Թաղարը պահանջում եւ լավ մշակված, փուխր, թափանցիկ և վաղախառ, մոլախուրից միանդամայն պատ, հարուստ հողերի ֆազարի մանր սերմերը ուշ են ծլում, սկզբնական շրջանում շատ զանդադ են աճում, այդ պահանջով ել մոլախուրով վարակված հողերում գաղարը կանոնավոր զարդանալ չի կարող հեշտությամբ ծածկվում և մոլախուրով և նկատ վալերիա:

Խեղդվում: Մանր հողերում գաղարը նույնականացնելու համար կարող է գորովեան կարծը հողը սեղմում և արմատիկը և նախալեռնակարմրը տալիս նոր յուրացվազ-խամ հողերում գաղար մշակել խորհուրդ չի տրվում: Ցանքաշրջանառության մեջ գաղարի համար ամենալավ տեղը կինքի շարքահերկ բուլսերից հետո (կազամբ, կարտոֆիլ), վորոնց մշակության ժամանակակից պահանջում է առաջարկ կատարելու համար:

մանակ դաշտը մաքրվում և մոլախոտերից, հողն եւ լավ վիթքանում են, Գաղարի համար հողը հիմականում պետք ե մշակել աշնանից, վորպեսզի վաղ գարնանը հնարավոր լինի կատարել ցանքը ժամանակին և ողտագործել հողի մեջ յեղած խոնավությունը Սակայն այն դեպքում, յերբ գաղարին նախորդում են կարտոֆիլ և ուշահաս կաղամբ, հնարավոր չի լինում աշնան հերկ անել այդ դեպքում հողը պետք ե վարել գարնանը: Գաղարի համար հողը պետք ե հերկել խորը, վարելաշերտի ամբողջ խորությամբ: Աշնանավարի դեպքում վաղ գարնան հողը պետք ե միայն փըլորեցնել փոքիսով, կուլտիվատորով կամ յերեսավարներով: Այս բոռից պարզ ե, վոր գաղարի հողն անպայման պետք ե լինի լավ մշակված, առանց կոշտերի և մոլախոտերի:

Գաղարը, ինչպես վերն ասացինք, ցանվում ե որդանական պարաբռացում տալուց 2—3 տարի անց շարքաներկ բուլսերից հետո, ուրեմն գաղարը որդանակոն հատուկ պարաբռացման գոմազը, կամպոստ և այլն) կարիք չի գտում, բայց հողը հանքալին պարաբռանյութերով պետք ե պարաբռացնել: Բացի աղոտական և ֆուֆորական պարաբռանյութերից, գաղարին անհրաժեշտ ե տալ նաև կալիումի աղեր, վորովհետեւ գաղարը հողից մեծ քանակությամբ կալիում և վերցնում:

Գաղարի մեկ հեկտար ցանքին պետք ե տալ՝

1. Ամռնիում+սուլֆատ կամ կիրազոտ . . . . . 250—300 կիլոդր
2. Սուլֆերֆոսֆատ . . . . . 300—350 "
3. Սելինիտ կամ կալիումեր 30% աղ. 300—350 "

Հանքալին պարաբռանյութեր տալիս են պարաբռանյութեր ցրող հատուկ մեքենաներով, իսկ մեքենաւուի բացակայության դեպքում կարելի յե ողտագործել ցորենի սովորական շարքացանները: Այս դեպքում շարքացանի խոփիկները պետք ե հանել:

Պարաբռանյութերը նախորդ պետք ե խառնել և ապա լցնելով շարքացանի մեջ՝ շաղ տալ: Հանքային պարաբռանյութերը տրվում են ցանքից առաջ, իսկ սելիմինիտը ցանկալի յե տալ աշնանից: Իրեն հանքային պարաբռանյութ գաղարի համար կարելի յե զործածել սովորական մոխիրը, հեկտարին 10—15 ցենտների նորմայով:

Գաղարի ցանքը կատարում են վաղ գարնանը, ձլունը հալչելուց և հողը չորանալուց անմիջապես, հետո, յերբ արգենցանք անելը հնարավոր է:

Գաղարը վորքան շնուր ցանենք ալնքան լավ, վորովհետեւ հողի մեջ շատ խոնավություն կլինը, իսկ գաղարի սերմերը շատ ուշ են ծլում (14—35 որ) և մեծ քանակությամբ ջուր պահանաջում: Գարնան հերկից անմիջապես հետո պետք ե ցանքը անել հակառակ դեպքում հողը կչորանա և սերմերը չեն ծլի, կամ շատ ուշ կծլեն, վորի հետևանքով բերքն ուժեղ չափով կնվազի: Գաղարը պետք ե ցանել այնպես, վոր նա ծլի առանց ջրելու, հողի խոնավությամբ և անձրևներով, այլապես ջրելուց հետո առանց աշեղը թռոյլ չի տա ծիւերին հողից դուրս գալու: Գաղարը պետք ե ցանել շարքացան մեքենայով: Մեզ մոտ՝ Հայաստանում առայժմ գաղարի շարքացան ձեւը տարածված չե և գաղարացան հիմնական ըրջաններում ցանքը կատարում են ձեռքով: Գասիալ ե՝ պետք ե անմիջապես անցնել գաղարի շարքացան մշակության, վորովհետեւ Խորհրդային բոլոր շրջանների փորձը ցույց ե տվել, վոր շարքերով ցանելիս հնարավոր ելու նույնական մեքենայով մեքենայացման լինթարկել և բարձր բերք ուտանալ: Խորհրդային Միության այլ շրջաններում ընդունված ե գաղարի շարքացանի միաշարք ձեւը, յերբ ցանում են շարքը-շարքից 50 սանտիմետր հուսավորության վրա խիտ, իսկ հետո նույնացնում են և բուլսերի արանքում թողնում 4—6 սանտիմետր աարածություն: Այս դեպքում հնարավոր ե միջշարքային տարածությունները մշակում են նաև ճակնդեղի միջշարքային տարածությունները:

Ցանեւմ են կամ ցորենի սովորական շարքացանով, նախապես խոփերը դնելով համապատասխան հեռավորության վրա կամ արձատապտղների հատուկ, զիլսավորապես ճակնդեղի շարքացանով: Ցանելուց առաջ շարքացանը պետք ե լույս ստուգել և դնել համապատասխան խորության և խտության վրա:

Փիրուն և մոլախոտերից պատ հողերում գաղարը կարելի է ցանել ավելի խիտ շարքերով, այն ե՝ 15—20 սանտիմ հեռավորության վրա, այդ դեպքում կապճանջիկի մեկ քաղհան ձեռքով, նոսրացման հետ միասին, իսկ հետագալում դաշտը պատկինի մոլախոտերից, հողն ել՝ փիրուն: Գաղարի սերմը ցանում են չոր, հեկտարին 6—10 կիլո, նայած շարքերի հեռավորության: Պետք ե ցանել 1 ու կեսից 2 սանտիմ խորհրդային իսկ շատ թեթև հողերում կարելի յե մեկ սանտիմետր ել խոր ցանել: Գաղարի սերմերը, ինչպես ասացինք, ծլում են գոնդաղ 14—35 որ:

բռամ, վորի հետևանքով հաճախս ստիպված են լինում միջարքաւ յին տարածությունների մշակությունը սկսել նախքան ծիրերի լեռեալը, կամ նոր ծլած ժամանակ: Վորպեսզի ցանած շարքերը լավ նշանակեն և հնարավորություն տան շարքերի մեջ մեքենան անվասա կերպով աշխատացնել—ցանքի ժամանակ գաղարի սերմի հետ խառնում են շուտ ծլող վորեւ բանջարի սերմ—սալաթ, բողկ և այլն: Ամռան և վաղ աշնան սեղոնի գաղար ունենալու նպատակով, գաղար ցանում են ուշ՝ շնանը (դոնդուրմա) այն հաշվով, վոր ցանած սերմերը չծին, մնան հողի մեջ ձյան տակ, մրնչն պարուն, և վաղ գանանը ծլեն:

Գաղարի խնամքն ե, վոր նա ժամանակին, մաքուր քաղհանվի և հողը պահի խոնավ փխրուն վիճակում: Քաղհանը ուշանալու դեպքում, բերքը կարող է 30—50% պակասել: Միջարքային տարածությունների փխրեցումը ձիու կամ տրակտորին ամրացրած կուտիվատորներով կատարում են այն ժամանակ, եթե ցանքի շարքերը սկսում են նշմարվել: Հետագայում փխրեցումը և քաղհանը կատարում են ըստ կարիքի, նայած մոլախոտերի գարգանալուն և հողի կեղեակալման: Սովորաբար առաջին քաղհանի հետ միասին կատարում են նաև առաջին նոսրացումը, բույսը բույսից թողնելով 4—6 սանտիմետր հեռավորության վրա, յեթե հետագայում գաղարը չի նոսրացվելու վնջերով վաճառելու համար, հակառակ դեպքում առաջին նոսրացման ժամանակ բույսը բույսից թողնում են 3—4 սանտիմետրի վրա, իսկ լերկրորդ նոսրացման ժամանակ բույսերը թողնում են 4—6 սանտիմ: Հառավորության վրա: Մերձքաղաքային և բանվորական վայրերին կից տնտեսություններում մոլախոտերից աղատ, փխրուն և սրննանյութերով հարուստ հողերում առաջին նոսրացումը կարելի լին կատարել սովորական ժամանակից ուշ, վորպեսզի հնարավոր լինի նոսրացրած գաղարը ոգտագործել բանմատակարարման համար:

Գաղարի զանազան սորտերի բերքահավաքը կատարում են զանազան ժամանակ: Վաղահաս գաղարը անմիջական սպառման նպատակով հավաքում են աստիճանաբար, մինչդեռ ուշանաս դագտրը հավաքում են աշնանը միանգամբց: Աշնան բերքը պետք է հավաքել ցրտահարություններից և աշնան անձրեններից առաջ, վորպեսզի գաղարը հողից չոր հանվի, մաքրի և չոր վիճակում լցվի բանջարապահեստը: Գաղարը հողից հանում են բալիցով, գութանով, հատուկ մեքենաներով կամ վերջապես արորով: Քան-

դած գաղարը հավաքում են դաշտում՝ մեծ կուլտերով և գիշերվացրտից պահպանելու համար ծածկում տերեններով, այնուհետեւ տերեններից մաքրում են և իսկ բաշտից փոխադրում:

Սեղանի հակնդեղը բանջարանոցային զլիսավոր կուլտուրաներից ե, այն մշակվում է բոլոր բանջարանոցներում և բոլոր գոտիներում, վորովհետեւ ճակնդեղը ավելի շատ է գործածվում կերակուրների մեջ, քան գաղարը: Շատ բանջարանոցներում ճակնդեղը մշակվում է վորպես լերկրորդական կուլտուրա՝ մաքրերի թումբերի վրա, իսկ վարոշ տեղերում ել, ճակնդեղին հատկացնում են հատուկ դաշտեր և ցանքաշրջանառության մեջ մտցնում: Ճակնդեղի փոփոխակներից մեզ մոտ տարածված են և ուշադրության արժանի լեն հետո յալները.

1. Յեզիվատական տախակ շատ վաղահաս, տափակ կամ կլոր տափակավուն փոփոխակ է, մուգ մանիշակա-կարմրավուն գույնի: Արմատապտուղն ունի հարթ մտկերես, սկզբում լինում է կլոր, հետագայում աճելով՝ ստանում է տափակ անկյունավոր ձև: Արմատիկը համարյա ամրողնովին հողից դուրս է գտնվում, հողի մեջ գտնվում է միայն խոր գնացող բարակ արմատի ծալրը: Հողից շատ հեշտ է հանվում, ուղղակի ձեռքով քաշելով: Շատ համեղ ճակնդեղ է, հասունանում է 3—3,5 ամսում: Բացասական կողմն այն է, վոր մյօւս սորտերի հետ համեմատած քիչ բերք է տալիս:


Բորդո.—Այս փոփոխակը ստացված է Մոսկվայի սելեկցիոն կայանում, միջին վաղահաս փոփոխակ է, կլոր, համարյա գնդաձեկ, մուգ բորդո գույնի մովկ: արմատիկը իր 2/3 մասով գտնվում է հողում, իսկ 1/3 հողից դուրս: Արմատապտղի մաշկի գույնը մուգ մանիշակագունին է: Բավականին մասմի փոփոխակ է, շատ համեղ և ուշադրության արժանի: Հասունանում է 4 ամսում:

Եղիպատուկանի գաղարը.—Միջին վաղահաս ամերկան ծագում ունեցող փոփոխակ է, արմատապտուղը կլոր է, հարթ մակերեսով, արտաքինից մուգ մանիշակագունին, մասի գույնը գեղնակարմրագույն, բավականի հյութալիք միս ունի և բարձր բերք է տալիս: Հասունանում է 4 ամսում:

Երթուրցի յերկար.—Սա հին գերմանական փոփոխակ է, շատ տարածված է, ունի մի շարք լավ հատկություններ: Ուշահաս է, լերկար կոնաձև արմատապտղով, վորնամբողջովին գտնվում է հողի մեջ: Մասի գույնը սև կարմրավուն է: Հասունանում է 4—4 ու լեռական մասում, մուգ պահելու համար շատ զիմացկուն է: Բերքա-

տվությունը բարձր է: Բացասական կողմն այն է, վոր խոր հռչէ մեջ և գնում և քանդելը դժվար է:

Ճակնդեղի մշակությունը հիմնականում նույնն է, ինչ վոր զազարինը: Սա նույնպես սիրում ե թափանցիկ, փուխր, ավազոտ, հարուստ, մոլախոտերից մաքուր հողեր: Ցանքաշրջանառության մեջ բռնում ե նույն տեղը, ինչ վոր գազարը, այն ե՝ թարմ պարարտացումից հետո 2—3-րդ տարին: Որգանական պարարտանլութեր չի պահանջում, լրացնցիչ արվում են միայն հանքալին



Նկ. 21. ճակնդեղ բորչո.

պարարտանլութեր, զազարի համար առաջարկած նորմաներով: Ցանքի ժամկետները նույնն են, ինչ զազարինը: Պետք ե աշխատաել, վորքան կարելի լի, շուտ ցանել: Ցանքը կատարվում է ճակնդեղի հատուկ շարքացանով՝ շարքը-շարքից 50 սանտիմետր հեռավորության վրա: Հետագայում շարքերը պետք ե նոսրացնել

և բռնկը-բռնյակ թողնել 12—15 սանտիմետր հեռավորության վրա: Մեկ հեկտարին ցանում են 10—12 կիլ սերմ: Քաղանի, փխրեցման և ջրելու պայմանները նույնն են, ինչ զազարինը:

Ճակնդեղի հավաքումը կատարվում է կամ ձեռքով, յեթե լեգիպտական տեսակն է և արմատապուղը բոլորովին հողից դուրս է, կամ՝ ճակնդեղ քանդող հատուկ մեքենայով:

Դլուխ սոխի մօսկուրյունը.—Սոխը մեր բանջարեղենների հիմնական կուլտուրաներից մեկն եր Նա մշակվում է լերկու ձևով զլուխ սոխ և կանաչ սոխ ստանալու համար: Կանաչ սոխի մշակությունը տարածված է բոլոր շրջաններում և տնտեսություններում: Դժվար է պատկերացնել մի բանջարանոց առանց կանաչ սոխի: Վորպես կանաչի՝ սոխը մշակվում է ալյուս, ինչպիս մյուս կանաչեղենները: Դլուխ սոխի մշակությունը մեզ մոտ կենտրոնացած է զլխավորապես գաշտավայրերում, Խաթունարխի և Ղուրդղուլու շրջաններում: Խորհրդավին Միության կենտրոնական շրջաններում զլուխը սոխը մշակվում է վորպես յեռամբա կուլտուրա, այնտեղ առաջին տարին սոխի սերմը ցանում են շատ խիտ և ստանում փոքրիկ տկոչինի մեծության սոխի զլխիկներ, վորոնք հաջորդ տարին տնկում են և ստանում իսկական զլուխ սոխի, յերրորդ տարին զլուխ սոխը տնկում են սերմ ստանալու համար: Մեզ մոտ՝ Հայաստանում ալդ ձեկի մշակությունը հայտնի չե, սակայն այդ ձեզ արժե փորձել մեր նախալեռնային և լիռ նալին գոտիներում զլուխ սոխ ստանալու համար, Մեզ մոտ զլուխ սոխ ստանում են հենց սերմ ցաներու առաջին տարին շնորհիվ այն բանի, վոր մեզ մոտ կլիման տաք ե և վեզեատացիոն շրջանը յերկար: Սոխի մեր փոփոխակները դեռ լավ ուսումնասիրված և նկարագրված չեն, սակայն բոլորին հայտնի յե Խաթունարխի, Ղուրդղուլու և Լոռի շրջանում Սաղախլուկի սոխը: Մեր Խաթունարխի սոխն ունի պարսկական ծագում և բերված է Խոյից:

Շատ համեղ, մսալի, քաղցր և բերքատու փափոխակ է: Արտաքին կեղելը մուգ մանիչակա-կարմրավուն է, զլուխը կլոր կամ կլոր-տափակավուն: Լավագույն սոխերից ե, սակայն ունի մի բացասական կողմ, վոր ձմռան պահելու համար շատ դիմացկուն չե չնորհիվ իր չափազանց մսալիության: Ղուրդղուլու սոխը նույնպես ունի պարսկական ծագում, բայց տարբերվում է նախորդից նրանով, վոր սրա տրաքին կեղելը դեղնակարմրավուն է:

Խուսական սորտերը մեզ մոտ մշակության մեջ առաջմաս  
չկան, դրա համար ել նրանց նկարագրությունը չենք տալիս:

Սոխը սիրում ե պրգանական նյութերով հարուստ, թեթև  
թափանցիկ, միջակ-խոնավության և մոլախոտերից ազատ հողեր:  
Դրա համար ել ցանքաշրջանառության մեջ նրան տեղավորում  
են թարմ պարարտացումից հետո՝ 2-րդ, 3-րդ տարում, շարքա-  
հերկ բոյսերից հետո (կազմը, տոմատ, բաղրջան և ալյու): Սոխ  
մշակելու համար ծանր կավալին հողերը պիտանի չեն, վորովնետե  
ջրելուց և անձրեներից հետո ուժեղ կերպով կեղեակալում են և  
հողը ամրացնում, վորով սոխին զրկում են զարդանալու և գլուխ  
մեծացնել հնարավորությունից: Սոխ մշակելու համար անպետք են  
նաև խոնավ, բարձր ստորչերկրաջրերով ճահճաշած «զինա» հո-  
ղերը: Որգանական պարարտանյութեր՝ գոմաղը, խառնաղը և  
ալյն սոխին պետք ե տալ միայն հումուսով աղքատ, կալվածա-  
զալին, ավազակավալին և կավալին հողերում, իսկ կանանավոր  
ցանքաշրջանառության դեպքում, յերբ սոխը մշակվում ե թարմ  
կամ լրիվ պարարտացումից 2—3 տարի հետո, որգանական պա-  
րարտացման կարիք չկա, պետք ե տալ միայն հանքալին պա-  
րարտանյութեր: Սոխին թարմ գոմաղը չպետք ե տալ: Եթե  
սոխը պետք ե պարարտացնել որգանական պարարտանյութերով,  
ապա ավելի լավ ե տալ փտած գոմաղը, կամ կոմպոստ, իսկ  
թարմ աղրով պարարտացնել նախորդ կուլտուրան: Փտած գո-  
մաղը, հեկտարին 30—40 տոննի չափով, տրվում ե գարնան  
հերկի ժամանակ: Լավ արդյունք ե տալիս նաև փտած գոմաղը  
և հանքային պարարտանյութերի միաժամանակ տալը՝ այս դեպքում  
թե մեջը և թե մլուսը վերցվում ե կես նորմայի չափով:  
Ազոտական պարարտանյութից պետք ե խուսափել, վորովհետե  
ազոտի գերակշռության դեպքում սոխը հոռանում է, վեցետա-  
ցիալի շրջանը յերկարում, սոխի գլուխը չի հասնում և մնում ե  
«գլաւել»: Հանքային պարարտանյութերը մեկ հեկտ. տրվում են  
հետեւալ քանակով:

Սուպերֆոսֆատ . . . . . 3,5—4 ցենտներ  
կիրազոտ կամ ամոնիում սուլֆատ . . . 1—1,5 ցենտներ  
Սելֆինիտ . . . . . 3,5—4 ցենտներ  
Կալիֆոսֆորական պարարտանյութերի փոխարեն սոխին  
կարելի լե տալ սովորական մոխիր, հեկտարին 10—15 ցենտներ:

Բոլոր տեսակի հանքային պարարտանյութերը տրվում են գարնան-  
հողը մշակելու ժամանակ և փոցիսով խառնվում են հողի հետ:

Սոխի համար հողը անպայման պետք ե հերկել աշնանից  
15—18 սանտիմ: խորությամբ՝ վաղ գարնանը, հանց վոր հողը  
քիչ չորանա և հնարավոր լինի մշակել, կատարում են մակերեւ-  
սալին փիլքեցում՝ 10—12 սանտիմետր խորությամբ, և անմիջա-  
պես սոխը ցանումք: Ցանքը պետք ե կատարել, վորքան կարելի  
յե շուտ, վորպեսզի սոխը ծլի հողի մեջ լեղած խոնավությամբ  
կամ վաղ գարնան անձրեներից, և ջրելու կարիք չլինի, վորով-  
հետեւ ջրելու հետեւանքով առաջացած կեղելը թույլ չի տալիս ծի-  
լերին դուրս գալ: Սովորաբար սոխը աետք ե ցանել մարտի վեր-  
ջերին մինչև ապրիլի լերկրորդ կեսը, ուշ ցանած սոխը գդիվար  
ե ծլում և ցածր բերք ե տալիս: Լավ արդյունք ե տալիս նաև  
սոխի ուշ աշնան ցանքը (դոնդուրմա), յերբ ուշ աշնանը հողը  
սառչելուց առաջ ցանած սերմը չի ծլում, մնում ե ձիան տակ և  
գարնանը, ձյունը հալչելուց հետո, յերբ հողի վերի շերտը (3—4  
սանտիմետր) տաքանում ե, սկսում ե ծլել և ալդիվիսով լրիվ ոդ-  
տագործվում ե ձմեռվա ընթացքում հողի մեջ կուտակված խո-  
նավությունը:

Մեզ մոտ սոխը ցանում են շաղացան և ձեռքով, վորի պատ-  
ճառով հետագա ամրող մշակությունը կատարվում ե ձեռքով և  
մեծ քանակությամբ բանվորական ձեռքեր պահանջում: Անհրա-  
ժեշտ ե անմիջապես անցնել շարքերով ցանելու ձևին և ցանքը  
կատարել ցորենի կամ սովորական սոխի հատուկ շարքացաննե-  
րով: Սոխը շարքացան անելու դեպքում կարելի լե առաջարկել  
հետեւալ յերեք ձևերը: առաջինը կատարում են սոխի ժապավե-  
նածն շարքացան, ամեն մի ժապավենը 10-շարքից մեկ մետր  
լայնությամբ, այդպիսով ժապավենի ամեն մի շարքը շարքից  
կլինի 10 սանտիմ հեռավորությամբ, իսկ ժապավենների մեջ  
թողնում են 50—60 սանտիմ լայնություն, փիլքեցումը մեքենա-  
յով կատարելու համար, իսկ ժապավենի ներսում քաղհանում են  
ձեռքով՝ նոսրացման հետ միասին: Յերկրորդ ձևը՝ շարքացան-  
շարքը-շարքից 30—50 սանտիմետր հեռավորության վրա՝ և վեր-  
ջապես 2—3 գծանի ժապավեն, գծերի մեջ թողնելով 10—15  
սանտիմետր, իսկ ժապավենների մեջ 50—60 սանտիմետր հեռա-  
վորություն: Ցանել 1—2 սանտիմետր խորությամբ, մեկ հեկտա-  
րին ցանելով 24—32 կիլոգրամ սերմ: Նպաստավոր պայմաննե-  
րում սոխը 8—10 որում ծլում ե:

Սոխի խնամքն ե՛ քաղհանել, փխրեցում և նոսրացումը՝ Առաջին նոսրացումը կատարում են այն ժամանակ, յերեք սոխը ունենում ե 10—12 սանտիմետր յերկարությամբ տերևներ, յերբ նոսրացած սոխը հասրավոր կլինի գործածել վորպես կանաչ սոխ, և բույսերը մեկը մյուսից թողնում են 2—4 սանտիմետր հետաքարության վրա:

Որդանական նյութերով հարուստ հողերում նոսր ցանքի գեղքում յերկրորդ և յերրորդ նոսրացումը կարելի լին չկատարել, իսկ խիտ ցանքի գեղքում անհրաժեշտ ե կատարել 2-րդ և 3-րդ նոսրացումները, հանած սոխն ոգտագործելով վորպես կանչ սոխ: Ամենամեծ ուշադրությունը պետք ե դարձնել քաղհանք և փխրեցումի ժամանակին կատարելու վրա: Առհասարկ սոխի դաշտը մոլախոտերից միանգամայն ազատ պետք ե լինի: Պետք ե քաղհանել ամառվա ընթացքում՝ 3 անգամ/ց վրչ զակաս: Միջջարքային և միջժապավենային տարածությունների քաղհանք և փխրեցումը պետք ե կատարել տրակտորներով կամ ձիու կուլտիվատորներով:

Զրովի պայմաններում մեծ նշանակություն ունի ջրելու նորման: Ակզրնական լրջանում սոխը հաճախ և շատ ջրել չի կարելի, պետք ե ջրել 15—20 որը մեկ անգամ, նայած սոխի դրությանը: Սոխը պետք ե ջրել այն ժամանակ, յերբ նրա տերևները մուգ կապտականաչագույն են դառնում: Շատ ջրելուց սոխը դեղնում ե և անպետքանում:

Աճեցողության և տերեների մեծանալու հետ միասին ջրի պահանջը հետզհետե ավելանում ե, զլուխ կապելու ժամանակ ավելի հաճախ են ջրում: Սոխը հասունանում ե սեպտեմբերի վերջը սկսած մինչև հոկտեմբերի յերկրորդ կեսը, լրիվ հասունացան նշան ե, յերբ սոխի տերեները բնականից սկսում են չորանալ, յերբ զլսի պարանոցը, «բողազը», ինչպես ընդունված ե առել, լավ սեղմքում ե: Լինում են դեղքեր, յերբ սոխի հասունությունը ձգձգվում ե և տերեները չեն չորանում: Այդպիսի դեղքերում սովորաբար դիմում են արհեստական միջոցների, այն ե՛ սոխի տերեները տրորում են, վորպեսզի աճեցողությունը կանգ առնի և գլուխը շուտ հասնի: Բայց այս միջոցը հաճախ ցանկալի արդյունք չի տալիս, ավելի լավ ե սոխը ժամանակից շուտ քանդել, հողից հանել և տռանց տերեները կտրելու 20—25 որ չորացնել արևի տակ, այս դեղքում նա ավելի լավ ե հասունա-

նում և ձմեռը լավ ե պահպամ, ճիշտ ալնպես, ինչպես կախած «գյալեցը»:

Սոխի նորմալ բերքը պետք ե հավաքել աշնան անձրևներից և ցրտահարություններից առաջ, սեպտեմբերի վերջին, հոկտեմբերի սկզբներին, հակառակ դեղքում թաց և ցրտահարված սոխը ձմեռը չի պահիլի: Սոխը քանդում են կամ բանով կամ արորով կամ բաղցներով: Տերեները կտրելուց հետո սոխը արեկ տակ լավ չորացնում են ապա փոխադրում պահեստ:

Վարունգի մօտիւրյունը.—Վարունգը նույնպես ամենատարածված, ամենահարզի և անհրաժեշտ բանջարեղեններից եւ: Ծնորհիվ իր վեգետացիայի կարճության այն մշակվում ե մեր բոլոր գոտիներում, նույնիսկ ամենաբարձր լեռնային գոտիներում:

Գոյություն ունին վարունգի բաղմաթիվ փոփոխակներ, սակայն մեզ մոտ ընդունված ե վարուգները բաժանել 2 հիմնական խմբերի՝ այսպէս կոչված «տեղական վարունգներ» և «ռուսական վարունգներ»: Վերջինները Ռուսաստանում մշակվող զանազան փոփոխակներ են, մասն, փշոտ և բարեկավոր, հաստ կեղեվով, շուտ զեզնող, սակայն յերկար ժամանակ թարմ նմացող և թթվի համար չափազանց արժեկավոր պտուղներով: Ռուսական փոփոխակները լինելով կլիմայական ցուրտ պայմաններին հարմարեցված, դաշտավայրերում լավ չեն աճում, իսկ նախալեռնային, մանտվանդ լեռնալիին գոտիներում հիանալի արդյունք են տալիս և արժանի յեն մեծ ուշադրության ու տարածման, շնորհիվ իրենց վաղահասության, լավ փրակի և առաջ պտղաբերության:

Մեր տեղական փոփոխակները պարսկական և տաճկական վարունգների խառնուրդներ են, և հայտնի լին «Կոտայքի» «Բըջնիք» Զանգիբրասարի և այլ տեղական անուններով: Մեր վարունգներն ավելի ուշահաս են, քան ռուսական սորտերը: Նայած փոփոխակներ և կլիմայական պայմաններին, վարունգը հասնում ե 50—70 օրում: Վարունգը լինելով տաք յերկրի բույս, շատ հետությամբ ցրտահարվում ե, նրա վրա աղդում են թե վաղ գարնան թե աշնան ցրտահարությունները, այդ պատճառով վարունգը ցանում են զարնան ցրտահարությունների վախին անցնելուց հետո, այն ե դաշտավայրերում ապրիլի 25-ից հետո նախալեռնային գոտում մայիսի 10-ից հետո, լեռնալիին գոտում մայիսի 20-ից հետո:

Սակայն ցանքը ձգձգել և ուշացնել չի կարելի, բոլոր շրջաններում ել պետք ե աշխատել մինչև հունիսի 10-ն ավարտել վա-

բունդի ցանքը: Վարունգ մշակում են թե ջրովի և թե անջրովի պարագաներում, որինակ՝ մեր լեռնալին խոնավ գոտու շրջաններում: Վարունգը պահանջում ե ցուրտ քամիներից պաշտպանված, առաք, թափանցիկ, հումուսով հարուստ, և քիչ խոնավ հողեր:

Վարունգը լավ աճում ե նաև խամ հողերում կամ բաղմալա խոտաբեկսերից հետո Յանքարջանառության մեջ դասավորում են թարմ պարարտացումից հետո՝ 2-րդ 3-րդ տարում, ծանր և հումուսով աղքատ հողերում վարունգը պիտք ե պարարտացնել որգանական պարարտանյութերով, փոտած զամաղբով հեկտարին 30—40 տոննի չափով, վորը հողին պիտք ե տալ աշնանից:

Վարունգի հողը կարելի յե պարարտացնելնաև կանաչ պարտացումով, որինակ վիկ-վարսակի խունուրդ, վիկ և ալլո:

Հումուսով հարուստ հողերում, որգանական պարարտանյութերի փոխարեն պիտք ե տալ հանքային պարարտանյութեր հետևակ քանակությամբ.

Կիրազոտ կամ ամոնիում-սուլֆատ 300 կիլորամ

Սուլֆերֆուֆատ 350—400 »

Կալիումի աղ 350—400 »

Վարունգին քլոր պարունակող պարարտանյութեր չի կառավար: Հանքային պարարտանյութերը պիտք ե տալ դարնանը հողը մշակելու ժամանակ:

Վարունգի հողը հերկում են աշնանից՝ վարելաշերտերի խոռությամբ (18—20 սմ.), իսկ գարնանը մակերեսալին մշակություն անում, զսպանակավոր փոցիներով, կուլտիվատորներով կամ յերեսավարներով: Աշնան անկանոն հերկի դեպքում գարնանը կրկնահերկ են անում: Գարնանը՝ փոտած զոմակը տալու դեպքում կրկնահերկը անհրաժեշտ ե:

Վարունգը մշակում են 2 ձեռվ: Դաշտավայրերի և նախալեռնային ջրովի պաշմաններում վարունգը մշակում են թումբերի վրա, իսկ լեռնաշին գոտում՝ հարթ տարածություններում: Թումբերի վրա մշակելու տիեխնիկան ե թումբեր պատրաստելը, նրանց յերկարությունը և լայնությունը հուն ե, ինչ վոր ասացինք տոմատի մշակության համար: Իսկ հարթ տարածություններում մշակելիս, վարունգը ցանում են շարքերով, շաբաթը շաբաթից 70—90 սմ. հեռավորության վրա նայած սորտին, իսկ բույսը բույսից 20—30 սմ. հեռավորության վրա: Հարթ տարածություններում ցանքը կարելի լի կատարել հացահատիկի կամ ճակնդեղի սովորական շարքացանով, համապատասխան չափով փոխելով խռ-

փերի հեռավորությունը: Թումբերի վրա մշակելիս ցանքը կաբելի յե կատարել թե մեքենայով և թե ձեռքով—բնացան, ամեն մեկը բնում պետք ե զցել 3—4 սկրմ: Մեկ հեկտարին ցանում են 4—5 կիլո սերմ: Մերմը պետք ե զցել մեկ ու կես 2 ու կես սանտիմետր խորությամբ: Թումբերի վրա մշակելիս պետք ե ցանել «քեց» լեկած հողում և թրջած սերմերով, իսկ հարթ տարծություններում շարքացանով ցանելիս պետք ե ցանել չոր սերմ: Մերմը յրի մեջ թրջել չի կարելի: Թրջելու ամենալավ ձեւ՝ տողրակի մեջ լցրած սերմերը մեկ որով խոնավ հողի մեջ թաղելն ե: Քեզը յեկած հողում թրջած սերմը ցանելու դեպքում, ցանքից անձիշապես հետո ջրել պիտք չե, ծիլերի դուրս գալուց հետո մինչև ձաղկելը վարունգը ջըռում են 1—2 անգամ, վորից հետո վար են դնում: Վարը դնելուց հետո վարունգն ալլոս չեն ջրում մինչև պտուղ տալը, իսկ պտղաբերության ժամանակ ջրում են հաճախ, որինակ դաշտավայրի չորային պայմաններում ջրում են ամեն մեկ բերքահավաքից հետո:

Նախալեռնային և մանավանդ լեռնալին շրջաններում այդքան շուտ-շուտ ջրելու կարիք չկա:

Ցերը վարունգի ծիլերը դուրս են գալիս և սկսում ե յերեղալ տառչին տերեւը պիտք ե հողը փլարեցնել և բույսերը նոռարացնել:

Այնուհետեւ, նախած հողին, կլիմային և առաջացած կեղեին ամբողջ վեգետացիայի ընթացքում 2—3 անգամ փինքցում և քաղհանում են:

Սնկալին հիմանդրություններին դիմանալու համար վարունգը պարբերաբար պիտի սրսկել, 0,5<sup>0</sup> բորդոյան հեղուկով, իսկ արքացող հիվանդության դեմ ծծումբ փչել:

Վարունգի բերքահավաքը սկսում ե պտուղների նորմալ հասունացման մոմենտից, ամեն 2—3 օրը մեկ անգամ, մինչև վեգետացիայի վերջը: Բերքը պիտք ե հալվաքել հով ժամանակ, կամ առավոտյան կամ ձաշից հետո, վարունգները հավաքել դամբյուղի կամ գողնոցի մեջ և այդպես փոխադրել ծածկի տակ, կատարել տեսակալորում և դարսել արկղների մեջ: Ցեթե նույն որը վարունգը տնտեսությունից չի փոխադրվելու, ապա հավաքածը պիտք ե փռել կամ պահել կույտերով՝ ծածկի տակ և թարմանալու: Հաճախ վրեն կանաչ խոտ զցել:

ՀՈՐԻՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Լորու մշակությունը կատարվում է 2 նպատակով—համիկ չորի ստանալու և կանաչ պատիճներն սպագործելու համար։ Առաջին նպատակի համար չորի մշակվում է դաշտում, հատիկ լորու մշակությունը դաշտային կուլտուրա յեւ Բանջարանոցում լորին մշակվում է գլեավորապես կանաչ պատիճ ստանալու համար, և միայն սերմացուն եւ, վոր թողնում են լրիվ հասնելու համար։ Բանջարեղենների մեջ լորին առաջնակարգ տեղերից մակն եւ գրավում, շնորհիվ իր սննդառու հատկությունների, զբախավագես սպիտակուցների պարունակության ու վիտամինների շատության։

Մեղ մոտ՝ բանջարանոցներում մշակվում են դիխավորապես պառ վ' սթաթչող բարձրացողուն տեսակները, վորովհետեւ դրանք տալիս են անթել «խառ» պատիճ լորի, բայց գորություն ունեն։



Նկ. 22. Լորի կարծ վաղոնառ։

Դոբու կարճ, չփաթաթվող տեսակներ վորոնք նույնակես համեղ, նուրբ, անթել և բերքառատ պատիճներ են տալիս և չափազանց արդիւնավետ տեսակներ են։ Մեղենայացված խոշոր անտեսությունների համար, ինարկե, ալելի շուտ ընդունելի յեն լուրու կարճ

տեսակները, վորոնք փայտեր խփել չեն պահանջում և հնարավորություն են տալիս մշակության պրոցեսները մեքենայացնել։

Լորին դործ ե ածվում թե ամբողջ դարնան, ամռան և աշնան ընթացքում, թարմ վիճակում բազմատեսակ կերակուրների մեջ, և թե ձմռանը՝ չորացրած վիճակում ու պահածող արդյունաբերության մեջ։

Լորու փոփոխակները շատ-շատ են, ամեն վայր ունի իր տեղական լորին, այդ պատճառով ել առայժմ հնարավորություն չկա տալ մեզ մոտ մշակվող փոփոխակների նկարագրությունները։ Լորին բանջարանոցային ցտնքաշրջանառության մեջ տեղակորում են 3—4 դաշտում, առանց որդանական պարարտացման, հանքալին պարարտանյութեր ել տալիս են ըստ կարելքի, նախահողին, բայց մեծ մասմբ լորուն վոչ մի պարարտացում չեն տալիս, վարովնետու լորին հողը ազուրով պարարտացնելու հատկություն ունի, շնորհիվ իր արմատների վրայի ուռուցիչների մեջ գտնվող բակտերիաների։ Հանքալին պարարտանյութերից լորին միայն ֆոսֆորական և կալիումական ալարարտանյութերի կարելք ե զգում։ Սրանց պետք ե հազին տալ ցանքից առաջ։ Կալիումական պարարտանյութը կարելի է տալ ցանքից առաջ, իսկ սուլպիկուֆատը՝ առաջին կուլտիվացիայի ժամանակ։ Լորու համար հերկ պետք ե անել աշնանից, 15—20 սմ. խորովիամբ գաղ գարնանը փոցխել իսկ ցանքից առաջ փխրեցնել 10—15 սմ. խորովիամբ կուլտիվատորներով լերսեավարներով կամ

Նկ. 23. Զփաթաթվող լորի.

առհասարակ վորեւ վոչ շրջող մեքենաներով։ Դրանից հետո քանի վոր հողը քեզ վիճակում ե, անմիջապես պետք ե ցանել։

Լորին տաք լերկրի բուս ե և լավ աճելու ու զարգանալու համար պահանջում է բարձր ջերմաստիճան։ Դարնան և աշնան ցրտանարությունները աղդում են լորու վրա, այդ ե պատճառը, վոր լորին պետք ե ցանել գարնան ցրտահարությունների վախն իսպառ անցնելուց հետո, այն ե՝ դաշտավայրերում ապրելի 28.ից հետո, նախալեռնային գոտում՝ մալիսի 10.ից հե-



տո, իսկ լեռնային գոտում՝ մացիսի 20. ից հետո։ Պետք է ցանել Հարթ մարզերում՝ շարքացանով՝ շարքը-շարքից 50 սանտիմ և բուլսը բուլսից 15 սմ. հեռավորության վրա։ Մեզ մոտ ընդունված են սակ լորու բնացանը, այդ դեպքում նույնպես կարելի լեցանել և շարքացանով՝ ձեռքով։

Շատ տեղերում ընդունված են լորու սերմը թրջել և այնպես ցանել դա շատ լավ է, յեթե կանոնավոր իրազործվի, բայց չպետք են մոռանալ վոր թրջած սերմը մեջենայով չի կարելի ցանել, այդ պատճառով ել լորու թրջած սերմերով ցանքը թույլատրել կարելի լեց միայն բացառիկ դեպքերում։ Բացի դրանից, պետք են իմանալ վոր թրջած սերմ կարելի լեց ցանել միայն քեշը յեկած հողում և խոնավության ազանովման դեպքում, այլապես թրջած սերմը չոր հողում կիսածլած վիճակում կչորանա և չի կանաչի։ Պետք են աշխատել լորին ցանել այնպես, վոր նա ընկնի անձրևների տակ և նրանց միջոցով ծլի, հակառակ դեպքում՝ ցանելուց անմիջապես հետո պետք են ջրել, բայց դա լավ չի, վորովհետեւ ջրելուց հետո հողի յերեսին առաջանում են հարս կեղև, վորը հնարավորություն չի տալիս լորու կեռ ծիլերին հողի յերես դուրս դալու։ Կեղևը կուրելու և լորու ծլելը հեշտացնելու համար, շատ լավ արդյունք են տալիս տափանելը, վորը կատարվում են



Նկ. 24. Լորի վելենեմ.

ջրելուց 2—3 որ հետո՝ տափանով կեղևը կոտրելը նպաստում են խոնավության պահպանմանը, իսկ հողի յերեսի փուխր լինելու հետեւանքով ծիլերը արագ են դուրս գալիս։ Մլելուց հետո լորին պետք է ջրել, փխրեցնել և քաղնանել։ Լորին սկզբնական շրջանում ջուր շատ չի պահանջում և առհասարակ խոնավ հողեր չի սիրում, այդ պատճառով ել ընդունված են լորին ծլելուց հետո մինչև ծաղկելը չջրել, ինարկե, յեթե զա հնարավոր ե տվյալ հողալին ու կիխայական պարմաններում։ Մաղկելուց հետո, պտղաբերության շրջանում լորին պետք են հաճախ ջրել։ Քաղնանը

պետք են կատարել ժամանակին և չթողնել, վոր մոլախոտերը զարգանան, իսկ փխրեցումը կատարել ամեն անդամ, յերբ հողի յերեսը կեղեակալում են, սակայն 2—3 անգամից վոչ պակաս ամբողջ վեգետացիայի շրջանում։ Կանաչ լորու բերքը հավաքում են պարբերաբար՝ ըստ պատիճների կազմակերպման, պատիճների դալար, թարմ և մսալի վիճակում, և յերբ միջի հատիկները դեռ նոր են կազմակերպվում։ Բերքը հավաքում են ձեռքով, հավաքած բերքը անմիջապես պետք են փոխադրել պահեստ՝ հով տեղ ծածկի տակ և փռել, վորպեսզի իրար վրա հավաքված լորին չտաքանա և չփափի։

Լորին քսակների մեջ յերբեք չի կարելի թողնել։ Փոխադրությունը պետք են կատարել ըստ հնարավորին հով յեղանակին։

Սայլի վրա բեռնած լոբին չտրոքելու համար քսակների վրա չնստել, ավելի լավ են լորին փոխադրել կողովներով։

50



ՀՀ Ազգային գրադարան  
NL0936017

Գիլը 40 կ.

1933թ - 188

11

26954